№ 85 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 22 1906 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 22 № 85

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ կամ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յակովբ Մելիք-Բախտամեանը յաւօք սրտի յայտնում է ազգականներին և ծանօթներին իր թանկագին մօր՝

ՋԱՒԱՀԻՐ ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 20-ին։ Հոգեհանգիստ տեղի կունենայ այսօր, շաբաթ, երեկոյեան ժամի 7-ին։ Յուղարկաւորութիւնը, ամսիս 23-ին, առաւօտեան, ժամը 10-ին, իր բնակարանից (Орбельяновская д. Харазова 28) դէպի ս. Նշան եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ (շ.կ.) 1—2

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ
Կիրակի, ապրիլի 23-ին, ժամը 4-ին կէսօրից յետոյ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ և ԱԼ. ԽԱՏԻՍԵԱՆ
կը կարդան
ՀԱՅԵՐԷՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ
Քաղաքական կուսակցութիւնների և Պետական Դումայի ընտրութիւնների մասին։
Մանրամասն ծրագիրը առանձին կը տպվի։ Մուտքը 10 կոպէկ է։ 2—3

„ՆԱՑԻՕՆԱԼ“
ԴՐԱՄԱՐԿՂԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՂ
Աւելի քան 500,000 գործածութեան մէջ։

Cassa
NATIONAL

140, 175 և 275 րուբլի։
ԵՂԲ. ՋԷՅՐՍ, ԹԻՖԼԻՍ,
Ցրէյլինսկի փող., № 7.
Հարմար ամսական վճարումներ
Պատկերազարդ բացատրութիւնները՝
ՁՐԻ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
հետեւեալ մեծադիր պատկերները

1) Խրիմեան Հայրիկ առանձին գինն	30	կ.
2) Վեհափառ Հայրիկ Օշականում	» 30	»
3) Հայոց Հայրապետութիւնը 15 գոյնով	50	»
4) Վարդանանց պատերազմը . .	» 50	»
5) Ոգի Հայաստանի	» 50	»
6) Ոգի Հայաստանի 92 գոյնով, տիպ արտասահմանի, ձեռագործի համար, հրատար. Վարդանեանի, 5 րուբ.	—	—
7) Ս. Էջմիածին, ձեռագործի համար	» 50	»
8) Աղասի հերոս	» 30	»
9) Աղամեան	» 30	»
10) Միքայէլ Նալբանդեան . . .	» 30	»
11) Գամառ-Քաթիպայ	» 40	»
12) Պեշիկթաշլեան	» 50	»
13) Կարա-Մուրզա	» 30	»

10 օրինակ գնողներին րուբլուն 20 գեղչ։ Ճանապարհածախսը մեզանից. վերադիր վճարով ուղարկվում է միմիայն նրանց, որոնք պահանջի հետ կուղարկեն փողի $1/3$ մասը, և կարող են ուղարկել մարկայով. կատարում ենք պատուէրներ ընթերցանութեան գրքերի և դասագրքերի, րուբլուն 20 գեղչ, ճանապարհածախսը մեզանից. ընդունում եմ կոմիսիայով գրքեր վաճառելու։

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій прос. Книжный магазинъ «Пушкинъ»
(առ.) 2—2

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԱՏՐՈՆ
Տեղական Դրամատիկ. Ընկերութեան Վարչութիւնը
պէտք է պահէ եկող սեզօնում
(1906—1907)
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ. ԽՈՒՄԲ
և հրաւիրում է ցանկացողներին (դերասան, ռեժիսոր, սցենարիուս և յուշարար) իրանց պայմաններով դիմել ընկերութեան նախագահին, պ. Գ. Զուբարին, այս հասցէով՝
Нахичевань на/Дону присяжному повѣренному Георгій Ивановичу Чубарову 21 л. д. № 8.
(ն. հ. շ.) (առ.) 3—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աջալուրջ հետեւել. Վերջին տեղեկութիւններ. Մամուլ. Պետական Դումայի շուրջը. Ջուր բան չէ. Ինչ անենք ուր գնանք. Խրոխտացած բիւրօկրատիան. Գիւղից. Ընդհանուր ուսում. Ժողովրդական լրագիր։ Մի կարևոր առաջարկութիւն. Ուսումնարանական համագումարի առիթով. Շուշին ոսկեհանք. Ախալցխայի ընտրութիւնները. Թատրոն և երաժշտութենամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱՋԱԼՈՒՐՋ ՀԵՏԵՒԵԼ

I

Քոչը սկսվել է մեր երկրի մի քանի տեղերում և խաշնարածների մի մասը արդէն թողել է ձմերոցները։ Շուտով կը շարժվեն և միւս խաշնարածները, կազմելով շարժուն օդակներ տափարակի և լեռնային արօտների միջև։

Դա պէտք է տևի ոչ թէ օրեր, այլ շաբաթներ և նոյն իսկ ամիսներ։

Քոչը դէպի սարերը գնում է ապրիլի երկրորդ կէսին, ամբողջ մայիս ամիսը և յունիսի մեծագոյն մասը, իսկ մօտ օգոստոսի 15-ից նա սկսում է իջնել լեռներից դէպի տափարակներ և հազիւ դադարում է սեպտեմբերի վերջին թւերում։

Այնտեղ, ուր քոչը անցնում է մարդկային բնակութիւններից հեռու և փոքր ի շատէ լայնարձակ ճանապարհներով, այնտեղ նա ընդհարումներ քիչ է ունենում բնիկ ժողովրդի հետ, իսկ այդպիսի տեղերի թիւը օրից օր պակասում է և մենք հանդիսատես ենք այն տխուր երեւոյթին, որ թափառող խմբերը շատ խիստ մօտենում են գիւղական հողերին, իսկ երբեմն նաև գիւղական բնակութիւններին կամ տներին։

II

Հինգ ամիս շարունակվող քոչւորական շրջանը մի մեծ պատուհաս է այն ժողովրդի համար, որի միջով անցնում է քոչը։

Խեղճ ժողովուրդը ստիպված է միշտ գտնվել լարված դրութեան մէջ, որովհետև ամեն մի րոպէ կարող են տեղի ունենալ ընդհարումներ թափառականների և գիւղացիների մէջ։

Քոչւորի և նստակեաց գիւղացու տրամադրութիւնները բոլորովին հակառակ են միմեանց։ Այն ժամանակ, երբ նստակեաց գիւղացին զբաղված է մի հոգսով, որ պահպանված լինի ամեն մի ցանքս, ամեն մի մարգագետին, ամեն մի մշակվող բոյս, մինչև որ նա կը հասնի և կը քաղվի ու կը հնձվի, ընդհակառակը խաշնարածը մտածում է միայն այն բանի մասին թէ ինչպէս կշտացնէ իր խնամքի տակ եղող խաշները և այդ պատճառով նա ներելի է համարում կերցնել, փչացնել ամեն մի արտ և մարգագետին, միայն թէ կուշտ լինեն նրա անասունները։

III

Որքան էլ աշխատում են զգոյշ լինել գիւղացիները և խուսափել զանազան առիթներից ընդհարվելու թափառականների հետ, որքան նրանք ներողամիտ են լինում դէպի թափառականների գործած մանր մեղքերը, այնուամենայնիւ այդ մեղքերը յաճախ այնպիսի կերպարանք են ստանում, որ գիւղացին այլ ևս անկարող է լինում համբերել և դիմում է արտակարգ միջոցների իր շահերը պաշտպանելու համար։

Այդպէս եղել է տարիներ շարունակ։ Զոհեր եղել են և երբեմն ծանր զոհեր։ Մարդիկ գանգատվել են և նրանց գանգատը երբեմն տեղ է հասել, իսկ յաճախ մնացել է բոլորովին անուշադիր, բայց թիւրիմացութիւնները չափազանց լայնածաւալ աղէտներ չեն առաջացրել։

Սակայն այս տարի իրերի դրութիւնը ուրիշ է։ Ամեն մի ընդհարում կարող է առիթ դառնալ նորանոր ընդհարումների և առաջացնել արիւնհեղութիւն ընդարձակ տարածութեան վրա։ Այդ պատճառով կարևոր է, որ այս տարի աւելի ևս քիչ առիթներ ստեղծված լինեն ընդհարումների համար, քան անցեալներում։ Այս տարվայ թիւրիմացութիւնները պատասխանատու բնաւորութիւն են կրում, ուստի և պէտք է նրանցից խուսափել ամեն կերպ։

IV

Ասելով այս բոլորը, մենք մտադիր չենք նոր խրատներ կարդալ հայերի գլխին, որովհետև գիտենք և համոզված ենք, որ ոչ մի հայ թոյլ չի տայ իրան առիթներ ստեղծել հայ-թուրքական ընդհարումների համար։

Մեր ժողովուրդը չափազանց շատ է զգվել այդ ընդհարումներից և նրանից երբէք չէ սպասել նիւթական օգուտներ, եթէ այդպիսիները նոյն իսկ շատ հեշտութեամբ ձեռք բերվէին։

Ուրեմն կասկած չը կայ, որ ոչ ոք մեզանում չէ կարող խրախուսել ընդհարումները հայերի և թուրքերի մէջ։ Բայց բաւական չէ, որ մենք չը ցանկանանք։ Պէտք է, որ ուրիշ ցանկացողներ էլ չը լինեն։

Եթէ դաւադրական ճիգերը և մեր հարևանների տգիտութիւնը, կապված թափառականների կիսավայրենի տրամադրութիւնների հետ, առաջ բերեն թիւրիմացութիւններ, մենք ստիպված պէտք է լինենք նրանց հետ հաշիւ տեսնել և ընդհարումների բռնվել։

Ուստի բաւական չէ, որ միայն մենք ինքներս ազատ լինենք դաւեր ստեղծելուց, մենք պէտք է հետևենք, որ և ուրիշների դաւերը ու յանցագործութիւնները աջողութիւն չունենան և իրանց սաղմի մէջ ոչնչանան։

Մենք շատ ենք արձանագրել դաւի կամ պրովօկացիայի դէպքեր և հայերս շատ անգամ կարողացել ենք մերկացնել պրովօկացիաները։

Այժմ էլ պարտաւորութիւն կայ հետևելու, որ մենք զոհ չը դառնանք նոր պրովօկացիաների։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 21 ապրիլի

Այսօր Տակլր և Մերեքենդ հայ գիւղերի գիւղացիների մի խումբ եկան ներկայացան ինձ և յայտնեցին, որ երէկ Թառ. ցիկ զօրախմբի հրամանատար Վէվէրը [illegible] ենթարկեց նրանց գիւղերը, փասելով 8 տուն և տուգանք վերցնելով 345 րուբլի։

Աշոտ եպիսկոպոս

—

Շարուր-Դարալագեազի գաւառի Ուլիա-Նորաշէն գիւղից եկած Մինաս Շահնազարեան, մտնելով «Մշակի» խմբագրութիւն, հաղորդեց մեզ հետևեալը.

Ուլիա-Նորաշէն գիւղը, որ անցեալ տարվայ մայիսի 31-ին ենթարկվել էր աւերի, ներկայումս մեծ կարօտութեան մէջ է։

Պէտք է տներ շինել, աւերված տնտեսութիւնը վերականգնել։

Գիւղը իր կողմից լիազօր է ընտրել երկու անձի գնալու Երևան ու Թիֆլիս և օգնութիւն խնդրելու գիւղի համար։

Այդ լիազօրներից մէկն է Մ. Շահնազարեանը, որը արդէն եղել է ապրիլի 19-ին գեներալ-նահանգապետի և նահանգապետի մօտ։

Գիւղի 230 տնից հազիւ մնացել է մի 60 տուն, այն էլ փոքրիկ տներ, խրճիթներ։ Իսկ լաւ տները ոչնչացրած են։ Գիւղի ընդհանուր վնասը հասնում է 450,000 րուբլու։

Որպէս զի կարելի լինի գէթ մասամբ գիւղը վերականգնել, անհրաժեշտ է առնուազն 100,000 րուբլի գումար։

Գիւղացիները, մնալով իրանց տներից դուրս, մատնված զրկանքների և ենթարկված հիւանդութիւնների, կորցրել են 170 հոգի։

Այժմ նրանք ցանկանում են նորից հաստատվել հողի վրա և շարունակել իրանց տնտեսութիւնը։ Լծկան անասուններ չունեն մեծ քանակութեամբ, բայց յոյս ունեն, որ կարող կը լինէին թուրքերից վարձել լծկաններ, սակայն դրա համար փող է հարկաւոր։

Նրանք նահանգական վարչութեան միջոցներից, ագրոնոմ Սահակեանի միջոցով ստացել են 800 պուդ ցորեն սերմացու, բայց պէտք է մշակել նաև բամբակ, չալթուկ և բոստաններ, որոնց համար նպաստ չունեն։ Իսկ միայն հողը պատրաստելու համար ծախքեր են պահանջվում, բամբակի համար օրավարին առնուազն 8—10 րուբլի, չալթուկի և բոստանի համար 5—7 րուբլի։

Արդարութիւնը պահանջում է, որ հայերի վնասը հատուցանեն այն 28 թուրք գիւղերը, որոնք յարձակվել են հայերի վրա և նրանց գիւղերը աւերել։

Շարուրի Բեշղազ գիւղի հայ բնակիչները փախել էին գիւղից։ Նրանց հետ միասին ապրող թուրքերը մնալով գիւղում, կամաց-կամաց տէր են դարձել ամբողջ գիւղին։ Հայ գիւղացիներից մի քանիսը սկսել են այժմ այցելել իրանց արտերը և մշակել նրանց։ Սակայն ապրիլի 11-ին հայերից մէկը, Ստեփան Սարգսեան, որ գնացած է լինում աշխատելու իր այգում, ենթարկվում է յարձակման թուրքերի կողմից և սպանվում։

Բեշղազ գիւղի հայ բնակիչները դժուարանում են վերադառնալ իրանց գիւղը։ Նրանք 60 տուն են։ Մի այդքան էլ թուրք կայ գիւղում, բայց վերջիններս ապահով են, որովհետև շրջակայ բոլոր գիւղերը թուրքական են։

—

Շամախի, 18 ապրիլի

Այսօր, կիրակի, ամսիս 16-ի լոյս 17-ի գիշերը Շամախուց 18 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Շարադիլ թուրք գիւղի վրա երեկոյեան ժամը 8-ին յարձակվում են հինգ աւազակներ. սպանում են մի թուրք կնոջ։ Նոյն գիւղի մօտ գտնվող Սաղեան հայ գիւղից 10 զինված երիտասարդներ օգնութեան են հասնում։ Օգնութեան հասնող հայերը միանալով Շարադիլցիների հետ, սկսվում է հրաձգութիւն աւազակների և գիւղացիների մէջ, որի ժամանակ սպանվում է աւազակներից մէկը և վիրաւորվում մէկը։ Շարադիլցիները գոհ լինելով սաղեանցիներից, այսօր մի արձանագրութիւն ներկայացրին պ. գաւառապետին։

—

Բագու, ապրիլի 18-ին

Այսպէս պատմեցին Շուշուց եկած 15 հոգի հայ գիւղացիները։ Ամսիս 16-ին նրանք, Շուշուց դիլիջանով ճանապարհվում են Եւլախ, 5 թուրքի հետ։ Հասնելով Բարդա կիսակայարանը, կառապան թուրքը, հանում է դիլիջանի ակը որ իբր թէ փչացել է, սկսում է, այստեղ այնտեղ ընկնել, գործիք գտնելու պատրուակով։ Հայերից մի քանիսը նկատում են մի ինչ որ անսովոր խորհրդակցութիւն մօտիկ «չայչիխանումը» և զգում են սպասվող վտանգի մօտ լինելը։ Հայերի այն հարցին, թէ ինչու չեն շարունակում ճանապարհը, կառապանի օգնականը ասում է, որ ակը կոտրվել է, պէտք է նորոգել... Մինչ այս, մինչ այն, 15 հոգի հայերից 7-ը՝ տեսնելով, որ մութը կոխում է, վախից սկսում են փախչել դէպի մօտիկ պօստային կայարանը, որը գտնվում է Եւլախի և Բարդայի արանքում։

Երբ 5 ընկեր թուրքեր իմանում են այդ, սաստիկ զայրանում են և սկսում են հայերին յանդիմանել, թէ ինչու են փախել, իրանք եղբայրներ էին... Թուրք ստրաժնիկը, որ այդտեղ է լինում, դիմում է հայերին արհամարհանքով. «Ձեզ պէտք է կոտորեն այսօր, տուէք մարդագլուխ մէկ-մէկ րուբլի, ձեզ տանեմ մինչև Եւլախ»... Պատրաստված չայչիխանի թուրքերը, տեսնելով իրանց ծրագրի ջուրն ընկնելը, վախենալով փախած 7 հայերից, որոնք պէտք է մատնացոյց անէին դրանց, սկսում են մնացած հայերին հայհոյել ու հեռանալ... Մութն ընկնում է, կառապանը վերջապէս լծում է և երբ հայերը հասնում են փախած ընկերների ետևից, կառապանը չէ ուզում դրանց վերցնել, և ուզում է շարունակել ճանապարհը այդ խաւար գիշերին։ Հայերը կորած կը լինէին, եթէ չը լինէին պօստի կօզակները, որոնք հրացանները պատրաստ բռնած ստիպեցին կառապանին կանգնել և գիշերել այնտեղ մինչև լոյսի բացվելը։

Առաւօտեան դէպ Եւլախ չը հասած՝ մէկ վերստի վրա կառապանը կանգնեցնում է հայերին և ստիպում է, որ իջնեն կառքից, էլ չէ ուզում հայերին տեղ հասցնել։ Վերջ ի վերջոյ հայերը աղաչում, պաղատում են, որ իրանց կէս ճանապարհին չը թողնէ, կառապանը պահանջում է մարդագլուխ մէկ-մէկ րուբլի, որ ստանալուց յետոյ նրանց հասցնում է Եւլախ, այս խօսքերը ուղղելով հայերին. «Երմալար խախշի գուրթարդըղ...» (Հայեր, լաւ պրծաք...) Զգուշացէք հայ ճամբորդներ, փառանութիւն չը կայ։

Յով. Ղազանչեան

Բեռլին, 20 ապրիլի։ Պետերբուրգից ստացված արժանահաւատ լուրերի համաձայն՝ ներքին գործերի մինիստր Դուրնովօն հրաժարական է տուել։

(Պ. Հ. Գործ.)

—

Թէօդօսիայից 20 ապրիլի թւով մեզ հեռագրում են.

Բեսարաբիայի թեմական առաջնորդ Ներսէսը, յունվարի 1-ին տաւրիկեան նահանգապետի միջոցով հեռացրեց մեր ծխական քահանայ Ներսէսին իր պաշտօնավարութիւնից, զրկելով մեզ հոգևոր մխիթարութիւնից։

Եկեղեցին փակվել է, ժամերգութիւնը դադարել և մենք մեր երեխաներով հանդերձ զրկված ենք հաղորդութիւն ընդունելուց։

Այդ ժամանակ մեռած մի աղքատ պառաւ կին թաղվեց առանց քահանայի. բողոքեցինք նոյն իսկ 36 անգամ։ Հեռագրեցինք կաթուղիկոսին, սինօդին, պրօկուրօրին, բացատրելով մեր դրութիւնը։

Մարտի 20-ին հազիւ այստեղ եկաւ սինօդի թոյլտուութեամբ հայր Ներսէսը իր ծառայութիւնը շարունակելու. առաջնորդը երկրորդ անգամ պահանջեց հեռացնելու Ներսէս քահանային։

Այդ մասին քահանան և մենք զեկուցեցինք սինօդին

Եւ ահա այդ պատճառով թեմական առաջնորդի զայրոյթը ամենաահեղ չափերի հասաւ,

Ապրիլի 9-ին № 1313 հեռագրով առաջնորդը հրամայեց տէր Ներսէսին անյապաղ հեռանալ Բարձրագոյն իր իրաւասութեան յանձնված թեմից։ Բողոք ուղարկեցինք սինօդին Խուդավերդեանի վրդովելի կամայականութեան դէմ։

Քննութեան համար ուղարկված է այստեղ Սաւրիկեան քահանայի փոխարէն Բարկէն վարդապետը և այսօր առաջնորդի գրութեան հիման վրա, ժամանակաւոր նահանգապետը յայտնեց Հերթիցեան քահանային, որ հեռանայ Թէօդօսիայից։

Նորից բողոք ուղարկեցինք սինօդ և թեմական առաջնորդի վարմունքը համարված է հասարակութեան իրաւունքների ուղղակի ոտնահարում և արդարութեան ուրացումն անձնական կրքերի բաւարարութեան համար։

Նորից փակվեց եկեղեցին և թող փակված էլ մնայ մինչև որ մենք չը լսենք նրա մէջ նոր արժանաւոր, քրիստոնէական ոգով ներշնչված, օգտակար թեմական առաջնորդի անուան յիշատակութիւնը, Խուդավերդեանի փոխարէն։

Ստորագրել են 90 հոգի։

ՄԱՄՈՒԼ

«Страна» լրագրի № 45-ում (13 ապրիլի) տպված է մի մեծ յօդուած «Անդրկովկասեան սատրապիաներում» վերնագրով, որտեղ նկարագրում է Անդրկովկասի այժմեան վիճակը և ցոյց է տալիս, որ այժմ գեներալ-նահանգապետները մի մի սատրապութիւն են կազմել ու «յեղափոխական Վրաստանը և ոչ-յեղափոխական հայ-մուսուլմանական նահանգները միակերպ պատժվում են կառավարութիւնից, թէև բոլորովին տարբեր պատճառներով»։

Թւելով վերջին ժամանակներում տեղի ունեցած դէպքերը, զպող զօրախմբերի սխրագործութիւնները, մամուլի դէմ յարուցված հալածանքը, յօդուածագիրը իբրև ելք այժմեան ծանր դրութիւնից առաջարկում է հետևեալ միջոցները.

1) Անպայման ամեն տեղ երկրում պէտք է անմիջապէս վերացնվի զինւորական դրութիւնը և պատժողական արշաւախմբերի ղեկավարները. պէտք է դատի ենթարկվեն. 2) իշխանութեան այժմեան ներկայացուցիչները պէտք է հեռացնվեն. 3) երկրին պէտք է տրվի լայն տեղական ինքնավարութիւն օրէնսդրական ֆունկցիաներով ներքին գործերի մէջ։

*

«Кавказскія Вѣсти» լրագրի երեկվայ համարում (№ 7) թուրք գրող Մ. Շահթախտինսկին առաջ է բերում Երիտասարդ Թիւրք կուսակցութեան օրգան «Շուրայի Իւմմէտ» լրագրից հետևեալ կտորը.

«Սուլթանը տկարացել է և ֆիզիքապէս և մտաւորապէս և այլևս հաշիւ չէ տալիս ոչ իր գործողութիւնների և ոչ իր ցանկութիւնների մասին։ Սուլթանին շրջապատող բիւրօկրատները, տեսնելով հիւանդութեան անխուսափելի ելքը, շտապում են օգտվել իրանց դրութիւնից։ Նրանք ստիպում են Աբդուլ-Համիդին ստորագրել ամեն տեսակ պայմաններ, դաշնագրեր և կոնցեսիաներ, որոնք յատկապէս վնասակար են պետութեան շահերի և կորստաբեր՝ օսմանեան ազգի անկախութեան և միջազգային յարաբերութիւնների համար։

«Մեր դաւաճան բիւրօկրատները նորանոր աղէտներ են պատրաստում են մեզ համար. ոչ միայն ներքին ցնցումներ, այլև արտաքին վտանգներ։ Օտար պետութիւնները, որոնք վճռել են օգտվել սուլթանի հիւանդութիւնից, չեն դլանայ արհամարհել թիւրքերին, առաջ կը հաստատեն նրանց վրա իրանց խնամակալութիւնը և ապա կուլ կը տան մեր անկախութիւնը»։

Առաջ բերելով այս կտորը, Շահթախտինսկին կցում է.

«Новое Время» լրագրի աշխատակից պ. Մենշիկովը իր «Ծագող կիսալուսին» յօդուածի մէջ, մի հայ հայրենասէրի ասելով, հաւատացնում է, որ Թիւրքիան ուրիշ բանի մասին չէ մտածում, եթէ ոչ նուաճել Կովկասը։

«Եւ սակայն Թիւրքիայի կառավարիչ շրջանները, ինչպէս տեսանք, մտածում են ոչ թէ նուաճումների, այլ սեփական պետութեան կողոպտման մասին»։

Խօսելով ապա հայ հայրենասէրի յայտնած կարծիքի մասին, թէ Թիւրքիան մտադիր է Անդրկովկասի շիա մահմեդականների հետ նուաճել Կովկասը, Շահթախտինսկին ասում է.

«Գոնէ Սուլթան-Խալիֆի յարաբերութիւնները դէպի շիա աշխարհը լաւ լինէին։ Այն ժամանակ էլի կարելի կը լինէր այսպիսի ենթադրութիւն անել։—Թիւրքիան կը ցանկանար անել ամեն բան, ինչ որ «Ծագող կիսալուսնի» հեղինակը նրան վերագրում է, բայց չէ կարող»։ Սակայն այդպիսի ենթադրութիւն չէ կարելի անել, որովհետև սուլթանի յարաբերութիւնները դէպի Պարսկաստանը այնքան թշնամական են, որ այսօր վաղը սպասվում է դիպլօմատիական յարաբերութիւնների խզումն Թեհրանի և Կ. Պօլսի մէջ։ Իսկ Անդրկովկասի թուրքերը՝ նոյնպէս պարսիկներ են, ըստ հայրենիքի, թիւրքեր ըստ լեզուի և շիաներ, ըստ դաւանութեան, ինչպէս բոլոր հիւսիսային պարսիկները—թաւրիզցիները, խոյեցիները և այլն։ Այժմ Պարսկաստանում թագաւորող դինաստիան—ղաջարականը՝ նոյնպէս թրքական է ըստ ազգութեան»։

Արձանագրելով թուրք հրապարակախօսի կարծիքը, չը համաձայնելով նրա այն մտքի հետ, թէ Անդրկովկասի թուրքերը ըստ հայրենիքի պարսիկներ են, մեզ համար անհասկանալի է մնում մի կէտ. ինչու Երիտասարդ-Թիւրքերը վնասակար են գտնում եւրօպական խնամակալութեան հաստատութիւնը Թիւրքիայի վրա, եթէ թիւրք ժողովուրդը հնարաւորութիւն չունի ազատել իրան և իր հայրենիքը Աբդուլ-Համիդի պէս հրէշից։ Այդ միտքը նոր չէ և վաղուց արծարծված է եւրօպական մամուլի մէջ։

*

Վրաց հրապարակախօսները մի առանձին եռանդով յօդուածներ են նուիրում Վրաստանի աւտօնօմիայի խնդրին և հասկանալի չէ ինչ պատճառով կամ ինչ հիման վրա համարում են սահմանադիր-ռամկավարական կուսակցութեան անդամներին, իբրև հակառակ այդ աւտօնօմիայի։ «Весенній Потокъ» լրագիրը երեկվայ իր համարում, ասում է թէ «այդ կուսակցութիւնը յայտնի—բուրժուական է և ծածուկ—շովինիստական»։ Ոչ մի բանից այդ չէ հետևում. եթէ ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը այժմ չէ զբաղվում ծայրային երկիրների աւտօնօմիայի հարցով, դրա պատճառը միայն այն է, որ այժմ դեռ պէտք է մտածել ընդհանուր ազատութեան մասին, դեռ պէտք է ստեղծել ընդհանուր ազատութեան պայմաններ, որից յետոյ միայն կարելի կը լինի մտածել և աշխատել ծայրային երկիրների մասին։ Իսկ թէ այդ կուսակցութիւնը ամենևին հակառակ չէ ազգութիւնների աւտօնօմիային, դա պարզ արձանագրված է նրա ծրագրի մէջ։

*

«Հիմնական օրէնքների» նոր ծրագիրը, ինչպէս կարելի էր սպասել, ընդհանուր զայրոյթ է առաջ բերել ամբողջ առաջադիմական բանակի և մամուլի մէջ։

Ահա ինչ է ասում «Рѣчь» լրագիրը. «Փետրվարի 20-ի օրէնքների տպաւորութիւնը գունաւորվում է զայրոյթի այն բռնկումի առաջ, որ սպասվում է։ Եւ այդ տպաւորութեան ներքոյ կը սկսէ իր նիստերը Պետական Դուման։ Եթէ կառավարիչ շրջանները դիտմամբ հետամուտ լինէին սաստիկ գրգռել այն մարդկանց, որոնք առանց այդ էլ կը բերեն իրանց հետ Պետերբուրգ Ռուսաստանը վերջերս յուզող զգացումների խտացած ցոլացումը—դրանից աւելի էլ լաւ բան չէր կարելի մտածել այդ նպատակի համար, քան հիմնական օրէնքների ծրագրի հրատարակութիւնը»։

«Страна» թերթը գրում է. «Ահա մի քանի ամիս է, որ հասարակութիւնը ջանք է անում զսպելու յեղափոխական խմորումն և թոյլ չը տալու որ կրկնվեն այն դէպքերը, որոնք վերջերս ցնցեցին մեր պետական օրգանիզմը և պատրաստեցին այժմեան պաշտօնական տերրօրը։ Բայց եթէ խաղաղ և լեգալ ռեֆորմների ճանապարհը փակվի, այն ժամանակ յեղափոխութիւնը նորից կը ստանայ բարոյական իրաւունք՝ վերսկսելու իր կործանիչ աշխատութիւնը։ Նախատեսում են արդեօք, նախազգում են մեր ճակատագրի վճռողները այս անխուսափելի եզրակացութիւնը իրանց նոր վարմունքից։ Հասկանում են արդեօք նրանք, որ իրանց երկնած «սահմանադրութեամբ» նրանք մղում են, հրում են ընդդիմադիր կուսակցութիւնները և հասարակութեան լայն խաւերը համակրութիւն ցոյց տալու յեղափոխութեան, եթէ ոչ ներգործապէս աջակցելու նրան»։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Վաղը, կիրակի, ժամը 4-ին կէսօրից յետոյ, Հաւլաբարի թատրոնում տեղի ունենալիք Հ. Առաքելեանի դասախօսութեան ծրագիրը հետևեալն է. 1) մեր դրութիւնը 1905 թ. հոկտ.

17-ին հրատարակված մանիֆեստից առաջ, 2) մեր դրութիւնը այդ մանիֆեստից յետոյ, 3) ազատագրական շարժումը, 4) այդ շարժման նպաստող և խոչընդոտ լինող պայմանները և քաղաքական կուսակցութիւնները 5) աջակողմեան կուսակցութիւններ (արքայական, հոկտ. 17-ի դաշնակցութիւն, իրաւական կարգի), 6) ձախակողմեան կուսակցութիւններ (սօցիալ-դեմօկրատիական, սօցիալ-յեղափոխական, արմատական, ազատ մտածողների, սահմանադիր-ռամկավարական կամ ժողովրդական ազատութեան և ուրիշներ՝ աւտօնօմիստների, ֆեդերալիստների, և այլն 7) սօցիալիզմի էութիւնը, 8) անհրաժեշտութիւնը՝ հայ ժողովրդի համար՝ յարել այդ կուսակցութիւններից մինին և մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին, 9) ինչ է կազմում «ժողովրդական ազատութեան» կուսակցութիւնը, 10) նրա ծրագիրը համեմատութեամբ հայկական համագումարի ծրագրի հետ և հայ ժողովրդի իղձերը։

—

Բագւում ապրիլի 17-ին ցրւում էին մուսուլմանների «Հումմաթ» կուսակցութեան թըռուցիկները, որոնց մէջ նրանք հրաւիրում էին քաղաքացիներին բոյկոտի ենթարկել Պետական Դուման։

—

Թիֆլիսի տեղական մի քանի թերթերի խմբագրութիւնները յանձնարարել են «Нов. Обозр.»-ի նախկին խմբագիր Նեմիրովիչ-Դանչենկոյին, որ Պետերբուրգ է մեկնում, խնդրամատոյց լինելու որ Պետական Դումայում մի տեղ յատկացնեն Թիֆլիսի մամուլի ներկայացուցչին Պետական Դումայի նիստերի մասին հաշիւներ տալու։

—

Փոխարքան պահանջեց նահանգապետներից տեղեկութիւն տալ իրան, թէ երբ են մտադիր քաղաքային ընտրութիւնների ժողովներ գումարելու, որպէս զի յետոյ վերջնական նահանգական ժողովներ նշանակվեն։

ՋՈՒՐԻ ԲԱՆ ՉԷ՞

—

Մայրաքաղաքի թերթերի վերջին համարները չափազանց մեծ զայրոյթով են խօսում այն անարդար ու անիրաւ վարմունքի մասին, որ վերջերս ադմինիստրացիան ցոյց տուեց Խարկովի պրօֆէսոր Հ. Ա. Գրեդեսկուլի վերաբերմամբ։

Դէպքը հետևեալն է. ինչ-ինչ քաղաքական յանցանքների համար կառավարութիւնը որոշել էր պրօֆ. Գրեդեսկուլին ադմինիստրատիւ եղանակով աքսոր ուղարկել։ Բայց որովհետև այդ նոյն պրօֆէսորը, «Միր» լրագրում տպագրված իր մի յօդուածի համար, դատաստանական եղանակով էլ դատի էր ենթարկված, ուստի ադմինիստրացիան, վստահ լինելով, թէ այդպիսով պրօֆէսորը աւելի մեծ պատժի պիտի արժանանայ, որոշել էր նրան աքսորելը յետաձգել մինչև դատի վերջանալը։ Բայց բանից դուրս եկաւ, որ դատարանը շատ թեթև վերաբերվեց Գրեդեսկուլի յօդուածին, միդասոր ճանաչելով նրան միմիայն «մամուլի մէջ չարախօսութիւն» անելու յանցանքի մէջ, մի յանցանք, որի համար մարդոց չեն զրկում իրաւունքներից, ինչ պահանջում և սպասում էր կառավարութիւնը, որպէս զի այդպիսով սահմ.-ռամկավարների մի ականաւոր ոյժն էլ չէզոքացած լինի։ Դատախազը, ի հարկէ, գոհ չը մնաց դատարանի վճռից և շտապեց բողոք ներկայացնել դատարանի բարձրագոյն ատեանին, ուր գործը պէտք է նորից քննվէր ապրիլի 11-ին։

Սակայն, մինչ այդ, վրա հասան Խարկովում լիազորների ընտրութիւնները և ապրիլի 6-ին պրօֆ. Գրեդեսկուլը լիազոր ընտրվեց կադետների կողմից։ Ադմինիստրացիան, տեսնելով որ իր բանը վատ է գնում, որ Գրեդեսկուլը, փոխանակ իրաւունքներից զրկվելու և աքսոր գնալու, կարող է շուտով պատգամաւոր ընտրվել և Տաւրիկեան պալատը մտնել, որովհետև Խարկովում կադետները ահագին յաղթութիւն տարան, ամբողջ 80 լիազորներ տալով, որոնց ամենահաւանական ընտրելին, իբրև պատգամաւոր, պրօֆ. Գրեդեսկուլն էր համարվում,—ասում ենք, այս բոլորը պարզ նկատելով, ադմինիստրացիան, առանց երկար մտածելու, առանց այլ և այլութեան և առանց հաշուի առնելու, որ երեք օրից յետոյ դատաստանական պալատում Գրեդեսկուլի գործը պէտք է քննվի, որին նա պարտաւոր է ներկայ գտնվել, հրաման է արձակում, որ պրօֆէսորին անմիջապէս աքսորեն ադմինիստրատիւ եղանակով Արխանգելսկի նահանգը։

Ահա այս է ամբողջ դէպքը, որի առիթով, ինչպէս ասացինք, զայրացած է ամբողջ ազատամիտ մամուլը։ Եւ յիրաւի, ինչպէս չը զայրանալ, երբ մանաւանդ գիտես, որ սա մի առանձին բացառիկ դէպք չէ, այլ այդպիսի դէպքեր շարունակաբար կատարվում են համարեա թէ ամեն օր և ամեն տեղ մեր դժբաղդ հայրենիքում, որտեղ իբր թէ ամենեբից ի վեր ժողովուրդը անձի անձեռնմխելիութիւն է վայելում։ Պրօֆ. Գրեդեսկուլի հետ կատարած վարմունքով Վիտտէ-Դուրնովօի կառավարութիւնը ուզում է պարզապէս հասկացնել, որ մենք ոչ միայն անձի, այլ և ժողովրդի ներկայացուցիչների, ընտրված պատգամաւորների անձեռնմխելիութիւն էլ դեռ չունենք։ Այլապէս Պետական Դումայի գումարվելու նախօրեակին կառավարութիւնը այդպիսի կամայական վարմունք չէր ունենայ մի անձնաւորութեան հետ, որը արդէն լիազոր է ընտրված և վաղն էլ կարող է հէնց պատգամաւոր ընտրվել։ Սահմանադրական կարգերով ղեկավարվող կառավարութիւնը շատ լաւ պէտք է գիտենայ, որ երբ մէկը ժողովրդի կողմից ներկայացուցիչ-պատգամաւոր է ընտրվում, նա անպատճառ իսկոյն արձակվում է բանտից կամ թէկուզ հազարաւոր վերստ հեռաւորութեան վրա գտնված աքսորավայրից։ Այդ կարգերին շատ լաւ տեղեակ է Վիտտէ-Դուրնովօի կառավարութիւնը։ Ուրեմն, եթէ նա, այդ բոլորը գիտենալով հանդերձ, իրան թոյլ է տալիս աջ ու ձախ Գրեդեսկուլներ ձերբակալել և աքսորել, դա կը նշանակէ, որ նա լսել անգամ չէ ուզում սահմանադրական կարգերի մասին, այլ շարունակում է յենվել միմիայն իր բանի ոյժի և զօրութեան վրա։

Այդպիսի պարագաներում անկարելի է փընտռել ոչ օրէնք, ոչ իրաւունք և ոչ տրամաբանութիւն։ Ամեն քայլափոխում դուք հանդիպում էք բանի ոյժի և կամայականութեան։ Ի՞նչ կարող էք անել. ջրի բան չէ։

Խ.-Ազատ

Ի՛ՆՉ ԱՆԵՆՔ, Ո՛ՒՐ ԳՆԱՆՔ

—

Գետաշէն, ապրիլի 16-ին

Պրօվօկատօրի չարանենգ, անզուսպ միտումներով, բիրտ ու գարշելի բռնապետական ուժով «սև հոգիները» սաւառնում են հայ գիւղերի վրա։ Նրանք անգութ են, մարդասիրութեան, խղճահարութեան նշոյլ անգամ չունին։ Նրանց համար չունին նշանակութիւն հայի լացըն ու կոծը, հայ գիւղերի իրանց «սև հոգիների» ձեռքով ալան-թալանի, կրակի մատնվելը, ընտանեկան սրբութեան արատաւորվելը։ Ի՞նչ անէ հայ գիւղացին, ո՞ւր դիմէ։ Զը խնայեց իր բերնի պատառը ինքնապաշտպանութեան միակ գործից, նամուս ու ղէյրաթ արեց չը դառնալ ծաղրածու, ամբողջ կրծքով, մարմնացած հաւատով դիմադրեց թշնամուն, թոյլ չը տալով այդ՝ պալերից միմիայն սխրագործութիւն ժառանգած՝ աւազակին սրբապղծելու հայ օրրանը։ Երկար ժամանակ շարունակվող հայ-թիւրքական կռիւը վերջապէս՝ եթէ սրտանց չասենք, երեսանց էլ է խելքի բերեց թուրքին, որ խուժանային յարձակումներով օգուտ չէ բերվում խաղաղութեանը. հարկաւոր համարեց հաշտութեան ձեռք բռնել հայի հետ։ Ընդհարումները, կռիւները դադարեցին, կամաց-կամաց տիրեց խաղաղութիւնը. ուրախացանք, կարծելով թէ այլ ևս սխրագործութիւններ, բարբարոսութիւններ չենք տեսնիլ, բայց, աւա՜ղ. «սև հոգիները» զինաթափութեան քողի տակ սկսեցին ռմբակոծել, աւերել հայ գիւղերը։ Ռմբակոծում են ո՛չ թէ նրա համար, որ հայերը չեն լսում կառավարութեան կարգադրութիւնները, ո՛չ, այլ նրա համար, որ պէտք է աւերել, քարուքանդ անել, ոչնչացնել հայի կուլտուրան, 3—4 յարկանի շինութիւնները, ալան-թալանի, կրակի ճարակ դարձնել դարաւոր հարստութիւնները, շանթահարել հայի սրբութիւնները։

Թնդանօթներով, 150 կօզակով Ֆօն-Օղերովսկին հինգ օր մնաց Գետաշէնում, թոյլ չը տուեց ոչ ոքի գործելու հինգ օր, երկար քըննութիւններ կատարելով համոզվեց, հէնց գաւառապետի օգնական Լավրովի տուած տեղեկութիւններից, որ գետաշէնցիք ամբողջ կռիւների ընթացքում երբեք չեն յարձակվել թուրքերի վրա, ընդհակառակը, աչքի են ընկել նրանով, որ իրանց դրացի այրումներին պահպանել են, չը կարելով նրանց հետ յարաբերութիւնները։ Վերջապէս խուզարկեցին տներ, խուզարկեցին մինչև իսկ մեր գետերն ու առուակները, պետական տուրքերը՝ 2000-ից աւելի գումարը, լիովին ստացան, ստուգվեց, որ բոլոր զինուորները ծառայութեան մէջ են, հաւաքվեցին բոլոր զէնքերը, վերջն էլ ռմբակոծեցին գիւղը, մահվան անկողին մտցնելով կանանց ու երեխաներին։ Էլ սրանից աւելի ինչ պէտք է արած լինէր Ֆօն-Օղերովսկին Գետաշէնում, միթէ այսքանը բաւական չէ։

Անցեալ օրը, այստեղ եկաւ գաւառապետ Աւալեանը, հետը կային երկու «տուղ» գերմանացի՝ Ֆօրեր և Գումել։ Վերջիններս լսել էին, որ Հաջիքենդի փասների համար կառավարութիւնը «կուժն ու կուլան» Գետաշէնի գլխին է կոտրում, գաւառապետով եկել էին իրանց փասները պահանջելու։ Զարմանում ենք, թէ ինչու այդ մարդիկ իրանց փասը հայերից են ուզում, այլ ոչ թուրքերից կամ մօլականներից։ Թողնենք այս մասին խօսելը, ապագան ցոյց կը տայ ամեն բան, միայն յիշեցնենք ընթերցողին, որ Ֆօրերի փասը երկու հարիւրից չէ անցնել, բայց տեսէք թէ այս միլիօնատէրը ինչպէս է մի չնչին գումար անօրէն կերպով աշխատում վարչական ձևով առնել տալ անմեղ գիւղից, և սա այն մարդն է, որի Ղարա-Եր կոչվող այգում Գանձակի կոտորածի ժամանակ սպանվեց վաթսունից աւելի հայ բանւոր, իսկ կոտորածի ժամանակ Գանձակի շուկայում թուրքերի ձեռքով թալանած հայերի ցորենն ու միւս ապրանքը էժան գնում և ծածուկ թոցնում էր Ելենենդորֆ։ Բայց մի րօպէ մոռանանք անցեալը, պատմեմ մեր լաւծը գաւառապետ Աւալեանի բերանից։

—Մօտեցէք, մօտեցէք։ Անչափ ցաւում եմ, որ ձեր տները կանգուն են մնացել։ Ֆօն-Օղերովսկին իր վրա դրված պարտականութիւնները չը կատարեց, հինգ օր այստեղ նստեց, միայն բաւականացաւ մի քանի կոտրատած հրացաններով։ Ափսոս, որ ես չեմ եղել նրա տեղը. գիտէք ինչ կանէի. քար ու քանդ կանէի, հողի հետ կը հաւասարեցնէի այս գիւղը, ինձ համար ոչ մի նշանակութիւն չէր ունենայ ձեր կանանց ու երեխաների լաց ու կոծը։ Ո՞ւմ համար էք պահում ձեր մօսինները, թնդանօթները, թաքցրած տաճկաստանցի «խումբերը». երբեք չեմ վախենում ձեր կոմիտէների սպառնալիքներից, թող ինչ ուզում են ինձ համար մտածեն... Դուք էք քանդել Հաջիքենդը, չէք ուզում, որ նա ամառանոց լինի։ Ձեզ ասում եմ, տուէք փասները, թէ չէ՝ զօրքի հրամանատարութիւնը ինձ է յանձնված՝ կաւերեմ այս գիւղը, այն ժամանակ թող ձեր Աշոտ եպիսկոպոսները հեռագրներով ինչ ուզում են անեն։ Սաղ տարի է գիւղ. դատաւորների մատեանում ոչ մի գրութիւն չկայ, պարզ է, գործերը կատարում են կոմիտէները. բաւական է, ասում եմ, թողէք այդ ցնորքները։ Ձեր երազած Հայաստանը երբեք չէք տեսնի։

Թոյլ չը տուեց ոչ ոքի գէթ մի խօսք պատասխանելու։

Մեն. Բաղդասարեան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

—

«Рѣчь»-ում տպագրված է պետական հիմնական օրէնքների նախագիծը, որը փոփոխութեան է ենթարկված մինիստրների խորհրդի նկատողութիւնների համաձայն։

1) Ռուսաց Պետութիւնը մէկ է և անբաժան։

2) Ֆինլանդական մեծ իշխանութիւնը, կազմելով Ռուսաց Պետութեան անբաժան մի մասը՝ իր ներքին գործերում կառավարվում է առանձին հիմնարկութիւններով, առանձին օրէնսդրական հիմունքներով։

3) Ռուսաց լեզուն ընդհանուր Պետական է համարվում և պարտադիր է Պետական և հասարակական հիմնարկութիւնների մէջ, նոյնպէս և զօրքի ու նաւատորմի մէջ։ Տեղական լեզուների և բարբառների գործածութիւնը որոշվում է յատուկ օրէնքներով։

Այնուհետև յիշվում են 5 գլ. I գլ., բարձրագոյն ինքնակալական իշխանութեան էութեան մասին, II գլուխը՝ ռուսաց հպատակների հիմնական օրէնքների և պարտականութիւնների մասին, III գլուխը՝ օրէնքների մասին, IV գլուխը՝ Պետական Դումայի և Պետական Խորհուրդի ու նրանց գործելու եղանակի մասին և V գլուխը՝ մինիստրների խորհրդի մասին։ I գլխում բարձրագոյն ինքնակալական իշխանութեան էութեան մասին ասված է, ի միջի այլոց.

4) Ռուսաց Կայսրը ունի բարձրագոյն ինքնակալական իշխանութիւն։ Նրա իշխանութեանը հնազանդվել հարկաւոր է ոչ միայն երկիւղից դրդված, այլ և խղճով. ինքը Աստուած է հրամայում։

5) Թագաւոր Կայսրի անձը սուրբ է և անձեռնմխելի։

6) Միևնոյն ինքնակալական բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է և Թագուհի Կայսրուհուն, երբ գահաժառանգութիւնը օրինական կարգով, կը հասնի կանացի սեռին, բայց նրա ամուսինը Թագաւոր չէ համարվում, նա վայելում է պատիւներ և արտօնութիւններ Թագաւորների ամուսինների հետ հաւասար, բացի միայն տիտղոսից։

7) Թագաւոր Կայսրը իրագործում է ռուսաց կայսրութեան օրէնսդրական իշխանութիւնը Պետական Խորհուրդի և Պետական Դումայի հետ միասին։

8) Թագաւոր Կայսրին է պատկանում օրէնսդրութեան վերաբերեալ բոլոր խնդիրների նախաձեռնութիւնը։

9) Թագաւոր Կայսրն է հաստատում օրէնքները և առանց Նրա հաստատութեան ոչ մի օրէնք չէ կարող ունենալ իր գործադրութիւնը։

10) Կառավարելու իշխանութիւնը իր ամբողջ ծաւալով պատկանում է Թագաւոր Կայսրին ռուսաց ամբողջ տէրութեան սահմաններում. բարձրագոյն կառավարութեան մէջ Նրա իշխանութիւնը գործում է անմիջական կերպով, իսկ ստորադրեալ գործերի կառավարութեան մէջ իշխանութեան մի որոշ աստիճանը նա, օրէնքի համաձայն, յանձնում է արժանահաւատ ստորադրեալ տեղերին և անձանց, որոնք գործում են Նրա անունով և Նրա հրամանների համեմատ։

11) Թագաւոր Կայսրը բարձրագոյն կառավարչական կարգով հրատարակում է օրէնքներին համապատասխան այնպիսի հրովարտակներ և հրամաններ, որոնք անհրաժեշտ են օրէնքը կատարելու համար, պետական վարչութեան զանազան մասերի կազմակերպութեան համար, պետական և հասարակական ապահովութիւնը և կարգը պահպանելու համար, նմանապէս և ժողովրդի բարեկեցութիւնը ապահովելու համար։ Բարձրագոյն կառավարչական կարգով հրատարակված հրովարտակները յայտարարում է կառավարչական սենատը (ներքին գործերի մինիստրը յարմար է համարում չը մտցնել այդ յօդուածի մէջ «համաձայն օրէնքների»)։

12) Թագաւոր Կայսրը ռուսաց տէրութեան արտաքին գործերի գերագոյն ղեկավարն է։ Նրան է պատկանում Ռուսաստանի միջազգային քաղաքականութեան գլխաւոր ուղղութիւնը տալը։ Նա է պատերազմ յայտարարում, խաղաղութիւն կնքում և պայմաններ հաստատում օտար տէրութիւնների հետ։

13) Թագաւոր Կայսրը—ռուսաց զօրքի և նաւատորմի միահեծան ինքնակալ զօրավարն է (վեհապետ)։ Նրան է պատկանում բոլոր ցամաքային և ծովային զինուորական ոյժերի բարձրագոյն հրամանատարութիւնը։ Նա է որոշում զօրքի և նաւատորմի կազմակերպութիւնը, որոշումներ է կայացնում զօրքերի դիսլօկացիայի վերաբերմամբ, նրանց պատերազմական դրութեան մէջ դնելու, զինուորական պարապմունքների և ցամաքային զօրքի ու նաւատորմի ծառայողների ծառայութիւնը վերջացնելու մասին։ Նա է որոշում սահմանափակումներ բնակավայրեր ընտրելու և անշարժ կայք գնելու այն տեղերում, որոնք մըտնում են բերդային շրջանի մէջ կամ կազմում են ցամաքային զօրքի և նաւատորմի համար յենակէտներ։

14) Դրամներ կտրելու և նրա արտաքին տեսքը որոշելու իրաւունքը պատկանում է Թագաւոր Կայսրին։

(Կը շարունակվի)

ԽՐՈԽՏԱՑԱԾ ԲԻՒՐՕԿՐԱՏԻԱՆ

—

Ֆրանսիական ոսկիները արդէն իրանց զօրութիւնը ցոյց են տալիս։ Փոխառութիւնը կնքվելուց յետոյ, առանց այն էլ առաջները բաւական սուր՝ Վիտտէ-Դուրնովօի կառավարութիւնը բոլորովին սպառնական դիրք է ընդունել։ Այս անգամ նա սպառնում է դեռ չը գումարված Պետական Դումային։ Այն նոյն Վիտտէն, որ սրանից ընդամենը 3—4 ամիս առաջ իրան այնպէս էր ձևացնում, թէ ինքը պատրաստ է ժողովրդի կամքի առաջ խոնարհվել, միայն թէ դեռ ծանօթ չէ ժողովրդի մեծամասնութեան կամքին և թէ այդ կամքը կարող է պարզ արտայայտված լինել Պետական Դումայի ընտրութիւններից յետոյ միայն ու այն ժամանակ էլ ինքը կը կարողանայ աւելի որոշ կերպով իր դիրքը որոշել և այլն և այլն,—ասում ենք, այդ նոյն Վիտտէն այսօր ամենայն յանդգնութեամբ պատրաստվում է արտայայտված ժողովրդի կամքը բոլորովին ոտնատակ անել և, հէնց իր ուզած ձևով կազմած, Պետական Դուման դեռ չը գումարված—խեղդել։

Զը բաւականանալով այն բոլոր «ժամանակաւոր» ու անժամանակ օրէնքներով, որ հռչակաւոր կոմսը նոյեմբերից սկսած դաւադրական կերպով շարունակ թխում և լոյս էր ընծայում, միշտ ձգտելով խեղաթիւրել, կրճատել ու նւաստացնել հոկտեմբերի 17-ի մանիֆեստով խոստացած առանց այն էլ շատ փոքրիկ ազատութիւնները, այժմ նա մի յատուկ խորհրդում մշակում է նոր օրէնքներ, որոնց «Պետութեան հիմնական օրէնքների» մեծ անունն է տալիս կոմսը։ Այդ օրէնքները դեռ ևս վերջնական որոշում ստացած չեն, բայց նրանք արդէն լոյս տեսան թերթերում և հաւանական է, որ վերջնական որոշում էլ ստանան, որովհետև դրանք Վիտտէ-Դուրնովօի և առհասարակ ամբողջ բիւրօկրատիայի սրտից բղխած և հէնց իրանց օգտին կազմված օրէնքներ են։

Այս խնդրի մէջ ամենաշատ զայրացուցիչ հանգամանքը այն է, որ բիւրօկրատիան է ինքնագլուխ մշակում է Պետութեան հիմնական օրէնքները, մի բան, որ նրա իրաւասութիւնից բոլորովին դուրս է. այդ իրաւունքը պատկանում է երկրի համաժողովրդային սահմանադիր ժողովին, ընտրված ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քուէարկութեամբ, իսկ երբ այդ մեզնում չը կայ, գոնէ պէտք է յանձնվէր այդ դերը Պետական Դումային։ Հէնց հոկտեմբերի 17-ի մանիֆեստն էլ այդպէս էր խոստանում։ Այլ կերպ չի էլ կարող լինել։ Մի երկրում, ուր ժողովրդային ներկայացուցչութեան սիստէմ է ընդունվում, այնտեղ ժողովրդի կամքն է, որ գերակշիռ դեր պէտք է կատարէ, ժողովրդի ներկայացուցիչներն են, որ պէտք է որոշեն ու սահմանեն՝ կառավարութեան զանազան օրգանների իրաւունքներն ու փոխադարձ յարաբերութիւնները, պետական ծախսերն ու եկամուտները, մինիստրութիւնը պատասխանատուութեան ենթարկելու հարցը և այլն, և այլն, մի խօսքով՝ ժողովրդի ներկայացուցիչների ժողովն է, որ պէտք է լինի երկրի գերագոյն մարմինն ու տէրը։ Այն ինչ Վիտտէ-Դուրնովօի և ամբողջ բիւրօկրատիայի հասկացողութեամբ բոլորովին այլ բան է դուրս գալիս։ Սակայն ոչ. բոլորովին չէ կարելի ասել, թէ Վիտտէն և առհասարակ բիւրօկրատիան այն աստիճան տգէտ են, որ չը գիտեն, թէ Պետութեան հիմնական օրէնքները մշակելու իրաւունքը ում է պատկանում։ Նրանք այդ շատ լաւ գիտեն և հէնց դրա համար էլ այդ օրէնքները մշակելու մասին չը մտածեցին աւելի առաջ, երբ դեռ Պետական Դումայի ընտրութիւնները չէին սկսվել։ Նրանք միանգամայն վստահ էին, որ իրանց—պահպանողական-կուսակցութիւնները ընտրութիւններում փառաւոր յաղթութիւն կը տանեն և, Պետական Դումայում ջախջախիչ մեծամասնութիւն կազմելով, կը սկսեն հէնց նոյն «հիմնական օրէնքները» մշակել, ինչ այսօր իրանք են մշակում։ Այդպիսով ամեն ինչ օրինական և սովորական կարգով կատարված կը լինէր և բիւրօկրատիան էլ պարծանքով կասէր աշխարհին. «Տեսէք թէ ինչպէս հաւատարիմ մնացինք մեր խոստմանը. ժողովրդի ներկայացուցչական ժողով հրաւիրեցինք և այդ ներկայացուցիչները եկան հաստատելու, որ Ռուսաստանի ժողովուրդը, հակառակ բոլոր սաէ-կօսէներին, ինքնակալ միապետութիւն է ցանկանում»։

Այդպէս կը լինէր, ասում ենք, եթէ բիւրօկրատիայի կողմնակից պահպանողական կուսակցութիւնները ընտրութիւնների ժամանակ յաղթութիւն տանէին։ Բայց երբ բիւրօկրատիան տեսաւ, որ իր բոլոր հաշիւները սխալ դուրս եկան և իր յոյսերը ի դերև անցան, այն ժամանակ նա որոշեց պատռել իր կեղծաւոր դիմակը ու հրապարակ գալ իր ամբողջ զզւելի կերպարանքով։ Նա որոշեց այլ ևս դուրս գալ շինծու օրինական ճանապարհից և ինքը ստանձնեց մշակել իր ուզած «հիմնական օրէնքները»։ Այդպիսով նա պարզապէս ասում է իր հակառակորդ կուսակցութիւններին. «Եթէ դուք ընտրութիւններում յաղթութիւն տարաք, այդ դեռ չէ նշանակում, որ դուք կարող էք մեզ ասպարէզից հեռացնել։ Բոլորովին ոչ. nous y sommes et nous y restons (մենք կանք և կը մնանք)։ Ահաւասիկ մեր «Պետութեան հիմնական օրէնքները», այդ օրէնքները որոշակի կերպով սահմանում են ձեր և մեր իրաւունքները. «ամեն բան մեզ, իսկ փշրանքները ձեզ»։ Եթէ համաձայն էք այդ փշրանքներով բաւականանալ, համեցէք, եկէք Պետական Դումա, իսկ եթէ չէք ուզում բաւականանալ, բարով եկաք. մենք առանց ձեզ էլ կարող ենք կառավարվել, ինչպէս որ կառավարվել ենք հարիւրաւոր տարիներ։ Եւ եթէ դուք կը ցանկանաք ու կը փորձէք ոյժով մեզ քշել մեր բռնած դիրքերից, դրանից էլ հիմա մենք չենք վախենում, որովհետև մենք այժմ բաւականին մեծ քանակութեամբ ֆրանսիական ոսկիներ ունենք և մեր Ռենենկամֆները, Դուբասօվները ու նրանց հրամանի տակ գտնված զօրքը փառաւոր կերպով արդէն ապացուցեցին, որ նրանք միայն արտաքին թշնամիներից վախենալ—փախչել գիտեն, իսկ «ներքին» անզէն թշնամիներին նրանք շատ լաւ են ջախջախում...»։

Ահա այս է Վիտտէ-Դուրնովօի ղեկավարութեամբ մշակվող «հիմնական օրէնքների» միտքն ու իմաստը։ Մինչև վերջին ժամանակները դեռ էլի յոյսի նշոյլներ կային, թէ կառավարութիւնը փոխադարձ զիջումներով մի որ և է համաձայնութեան կը գայ Պետական Դումայի հետ և երկիրը խաղաղ ընթացքի մէջ կը մտնի։ Բայց այժմ այդ յոյսերն էլ ի դերև դուրս եկան. նոր ոսկիներից ոյժ առած և խրոխտացած բիւրօկրատիան ոչ միայն զիջում անելու ոչ մի տրամադրութիւն չէ ցոյց տալիս, այլ և ընդհակառակը՝ նա պարզապէս ցանկանում է պրօվօկացիա սարքել. իր ապօրէնի վարմունքներով ու խոստմնազանցութեամբ նա ուզում է գրգռել օպպօզիցիային, նրան անպատրաստ՝ պատերազմի քաշել և, կատարելապէս ջախջախելով, վերջնական հարուածը տալ։ Բայց արդեօք դարձեալ չէ սըխալվում խրոխտացած բիւրօկրատիան իր այս հաշիւների մէջ էլ, ինչպէս նա նոյնպէս չափազանց խրոխտացաւ եապօնական պատերազմից առաջ, բայց և գլխիկոր սխալվեց իր բոլոր հաշիւների մէջ։ Միմիայն խրոխտանքներով ու բիրտ ոյժով շատ հեռու չէ կարելի գնալ։ Եթէ բիրտ ոյժը միայն բաւական է մի երկիր կամ ժողովուրդ նուաճելու և ճնշելու համար, բայց նոյն ժողովրդին ու երկիրը կառավարելու համար բիրտ ոյժից շատ աւելի կարևոր ու անհրաժեշտ է ունենալ քաղաքական մեծ տակտ և գիտակցութիւն, հեռատեսութիւն ու շրջահայեցութիւն, որոնցից դժբաղդաբար մեր բիւրօկրատիան միանգամայն զուրկ է։

Ռ.

ԳԻՒՂԻՑ

—

Փարլի, ապրիլի 10-ին

Վերջին ժամանակներս մեր գիւղացիների մէջ մի շատ գեղեցիկ սովորութիւն է մտել։ Ամեն մի հասարակական հարց լուծելիս հաւաքվում են գիւղացիք՝ միասին խօսելու, խորհրդակցելու վճռելիք հարցի մասին։ Եւ ամեն մի հասարակական խօշոր, կնճռոտ խընդիր առանց երկար ու բարակ վիճաբանութեան առարկայ դառնալու՝ լուծում ստանալ չէ կարող։ Ինքն ըստ ինքեան սա մի ուրախալի երևոյթ է։ Այլ ևս «երկու ջուխտ մի կէնտ» ազդեցիկ ախսախալներն ու տուզերը չեն կարող իրանց շահերին ու քմահաճոյքներին ծառայեցնել գիւղը և հասարակութիւնը՝ հանդիսանալով գիւղական հասարակական հոսանքների ղեկավար։ Անցել է այդ շրջանը։ Գիւղացին իր թողած—թերևս պոչը խուզած—իրաւունքները այլ ևս չէ ուզում թողնել մի քանի անձանց բարեհաճութեան. իր ղեկը ինքն է ձեռք առնում և կամենում է գիտակցօրէն վերաբերվել դէպի իր շուրջը կատարվող երևոյթները։ Բայց արի տես, որ այդպիսի սկզբունքներով առաջնորդվելը ամենևին դուր չէ գալիս մի կարգի մարդկանց, որոնք մինչև այդ յայտնի են եղել հասարակութեանը իրանց արատաւոր թափթփականութեամբ։ Դրանք մէկ-մէկ կուլակներ են եղել մեր գիւղերում և իրանց կեղտոտ ցանկութիւնները իրագործելիս միջոցների մէջ ոչ մի խտրութիւն չեն դրել։ Անխղճօրէն մինչև այժմ օգտվել են գիւղացու թէ տգիտութիւնից և թէ նիւթական սուղ վիճակից՝ իրանց մութ-անձնական շահերին, ստոր կամայականութիւններին բաւարարութիւն տալու համար։ Մտքի և տնտեսական աղքատութիւնը մեր գիւղացուն միշտ հլու հպատակ է դարձրել այլ և այլ տեսակ կուլակների։ Գիւղացին միշտ կեղեքվել, հարստահարվել, ամեն տեսակ տանջանքների է ենթարկվել՝ իր տգիտութեան ու աղքատութեան պատճառով...

Եւ երբ այսօր շնորհիւ վերջերս կատարված դէպքերի, տեղի ունեցան շարժումներ, գիւղացին սկսել է գիտակցել իր դրութիւնը և նրա թերևս աղքատ, բայց կրթված ու բանիմաց զաւակները հրապարակ են գալիս այլ և այլ նպատակով գումարված ժողովներում իրանց անշահ ու արդար դատողութեամբ՝ կեղտոտ կուլակ-տզրուկները—որոնց գլխին այժմ յաճախ առնում է յանուն ճշմարտութեան բարձրացրած փայտի ծայրը—անկարող լինելով տանել իրերի այդպիսի դրութիւնը՝ ասպարէզ են գալիս իրանց նենգ ու չարամիտ արարքներով...

Մի քանի օր սրանից առաջ գիշերը, Աշտարակում «անյայտ չարագործները» կտրում են չոր խաղողի այգի։ Երկար ու ձիգ տարիների չարքաշ աշխատանքը մի քանի ժամվայ ընթացքում ոչնչութեան են մատնում. ամբողջ ընտանիքների դժբաղդութեան, չքաւորութեան պատճառ են դառնում։ Եւ ինչու։ Որովհետև մարդիկ համարձակվում են հրապարակով սևին սև անուանել, սպիտակին՝ սպիտակ։ Որովհետև մարդիկ քաջութիւն ունեն մերկացնել ու մտրակել մեղաւորներին և ջատագովել հասարակական շահերը գերադասօրէն։ Որովհետև տզրուկ-կուլակները իրանց ցինիկ մեղքերի համար պատասխանատուութեան և պատժի են ենթարկվում... Եւ անկարող լինելով հրապարակով, ճշմարիտ խօսքի միջոցով պատասխանել հակառակորդներին՝ «անյայտ չարագործները» դիմում են ստոր ու անմարդավայել միջոցների՝ որպէս զի լռեցնեն իրանց մերկացնողներին ու մտրակողներին։ Բայց պ.պ. «անյայտ չարագործներ», ձեր վարմունքը տմարդութիւն, անբարոյականութիւն է. չարագործներին ու սրիկաներին յատուկ թեթևամտութեամբ էք վերաբերվում դուք դէպի ձեր ընտրած միջոցը։ Ինչով է մեղաւոր ամբողջ ընտանիքը, երբ նրա անդամներից մէկն ու մէկը՛ ձեր երեսին ճշմարտութիւնը նետելու քաջութիւնն է ունենում։ Եւ միթէ կարծում էք արդարութեան ձայնը պէտք է լռէ, խեղդվի ձեր չարագործութիւնների հանդէպ։ Զարմանալի սխալվում էք։ Վաղ թէ ուշ դուք, «անյայտ չարագործներ», հրապարակ կը գաք ձեր մրոտ արարքներով հանդերձ, յայտնի չարագործներ կը դառնաք և այն ժամանակ ձեզ համար հասարակական արդար դատից խուսափելը անհնարին է...

Իսկ դուք, աշտարակցիք, մի ծածկէք յանցաւորներին և այդպիսով մեղսակից լինել չարագործներին։ Ձեր բարոյական պարտականութիւնն է երևան հանել մեղաւորներին, պատժել նրանց, որպէս զի գիտողներս էլ հաւատանք, որ դուք բարոյապէս ընկած չէք, այլ ընդունակ էք ամենաբաղձելի միջոցների դիմել՝ չարիքը արմատախիլ անելու նպատակով։ Դուք ձեր լռութեամբ խրախուսում էք չարագործներին և այդպիսով հնարաւորութիւն էք տալիս նրանց նոյնանման խաղեր խաղալու ամեն մէկիդ գլխին։ Հարկաւոր չէ խնայել այդպիսի հասարակական ցեցերին։ Մեզ համար աւելի քան պարզ է այն հանգամանքը, որ գիւղացիներից շատերին յայտնի է չարագործութեան աղբիւրը. մեզ յայտնի է և այն, որ այդ շատերը ընկճվում էք չարագործ-տզրուկների ազդեցութիւնից, որ վախենում էք նենգութիւնից, ստոր վրէժխնդրութիւնից։ Այդ բոլորը իմանալով հանդերձ, մենք ուզում ենք յուսալ, որ աշտարակցիք, բարոյապէս այնքան բարձր էք կանգնած, որ ճշմարտութիւնը հրապարակ հանելու քաջութիւնը կունենաք։ Այլապէս դուք արժանի էք դատապարտման, որովհետև յանցաւորին ծածկելը ինքն ըստ ինքեան յանցանք է։

Գիւղական

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՄ

—

Մոսկվայի գեմստվային վարչութիւնը ստացել է լուսաւորութեան մինիստրութեան մշակած ծրագիրը կայսրութեան մէջ ընդհանուր ուսումը և ժողովրդական բարձրագոյն և ստորին ուսումնարանների կանոնադրութիւնը մտցնելու մասին։ Այդ ծրագիրը ուղարկելով զեմստվօյին, մինիստրութիւնը խնդրում է դրա մասին իր կարծիքը յայտնելու։ Ծրագրի էութիւնը հետևեալն է.

1)Երկու սեռի բոլոր մանուկները, մի որոշ հասակի հասնելով, սովորում են ուսման դասընթացքը տարրական դպրոցում։ 2) Դպրոցական հասակը համարվում է 8—12 տարեկան։ 3)Ուսումնարանի ամեն մի ուսուցչի վրա օրէնքով պէտք է ընկնի ոչ աւելի 50 աշակերտից։ 4) Ամեն մի ուսումնարան ամենապակասը պէտք է ունենայ 1 ուսուցիչ և 1 կրօնուսոյց։ 5) Ուսումնարանները բացվում են տեղական ազգաբնակութեան բարեյօժար կամքով։ 6) Ընդհանուր ուսումը ներմուծվում է աստիճանաբար, համաձայն ազգաբնակութեան ցանկութեան, բայց 10 տարվայ ժամանակամիջոցում։ 7) Ընդհանուր ուսումը, ներմուծվելը սկսում է Ռուսաստանի կենտրոնական նահանգներից և աստիճանաբար տարածվում է ծայրերկիրների վրա։ 8) Մինիստրութիւնը իր վրա է առնում ուսուցչական կազմի վարձատրութիւնը, ամեն մի ուսումնարանին տալով տարեկան 390 րուբլի։ 9) Պետական գանձարանի յատկացրած օժանդակութիւնը ընդհանուր ուսում տարածելու համար, տևում է 10 տարի շարունակ։ 10) Ամեն մի ուսումնարանական շրջան ունենում է իր շառաւիղը ոչ աւելի երեք վերստից, իսկ վերջերում այդ տարածութիւնը, պակասելով հասնում է երկուսի։ 11) Ուսումնարանում ընդունվում են բոլոր մանուկները առանց խտրութիւն դնելու կարողութեան և կրօնի մէջ։

Բարձր տեսակի ժողովրդական դպրոցները բացվում են կառավարչական, հասարակական հաստատութիւնների և մասնաւոր անձանց կողմից ու գտնվում են ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան ու հսկողութեան ներքոյ։ Ժողովրդական բարձր ուսումնարաններում ընդունվում են ժողովրդական տարրական դպրոցների դասընթացքը աւարտողները։ Այդ ուսումնարանները ունենում են 4 տարվայ դասընթաց։ Այդտեղ աւարտող աշակերտները առաջին կարգի աստիճանն են ստանում և զինուորական ծառայութեան մէջ արտօնութիւնները վայելում։ Միևնոյն հիմունքներով էլ բացվում են իգական և խառն դպրոցները, երկու սեռի մանուկներին միասին ուսուցանելու համար։

Այդ նախագիծը քննվելու էր ապրիլի 15-ին։ Հետևանքի մասին կը հաղորդենք։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

—

Ռուսաստանում ներկայումս լոյս տեսնող ժողովրդական թերթերի մէջ ամենահին թերթերից մէկն է «Вятская газета»-ն, որ 12 տարի շարունակ հրատարակվում է Վեատսկի նահանգական զեմստվօյի։ Թերթը հրատարակվում է գիւղացիների համար և յաջողութեամբ կատարում է իր կոչումը։ Գիւղացիները ոչ միայն նրա ընթերցողներն են, այլ և աշխատակիցները։ Սկզբում գիւղացիների աշխատակցութիւնը արտայայտվում էր միայն նամակներով և համառօտ տեղեկութիւններով գիւղական կեանքի վերաբերմամբ, որոնք առ հասարակ գիւղա-տընտեսական բնաւորութիւն ունէին։ Վերջին տարիների անցքերը գիւղացիական միջավայրում ջերմ հետաքրքրութիւն զարթեցրին դէպի հասարակական և քաղաքական հարցերը, որը ազդեց և «Вятская газета»-ի թղթակցութիւնների վրա։ Նրա վերջին համարներից մէկը, 10-րդը համարեա ամբողջապէս կազմված է գիւղացիների աշխատութիւններից, և ինչպէս բոլորովին արդարացի կերպով նկատում է թերթի խմբագրութիւնը, այդ աշխատութիւններից «պարզ կերպով երևում է գիւղի ցանկութիւնների և ձգտումների կատարեալ նմանութիւնը այն գաղափարների հետ, որոնք ոգևորում էին վերջին 50-ամեակում ռուսաց ինտելիգենցիային. այդ իրողութիւնը լաւ ապացոյց է, որ ազատագրական շարժումը ինտելիգենցիայի անհիմն ցնորքների պըտուղը չէ»։

Ժամանակակից ազատագրութեան մէջ գիւղացիների մասնակցութիւնը, քաղաքական պրօգրէսիվ կուսակցութիւնների մէջ մտնելը ապացոյց է, որ գիւղացիների և ինտելիգենցիայի համերաշխութիւնը, որի մասին խօսում է «Вятская газета» թերթը, արտայայտվում է արդէն ոչ միայն բառերի, այլ և գործողութիւնների մէջ։ Թէ նրանք և թէ միւսները յաճախ են ասպարէզ գալիս իբրև մարտնչողներ Ռուսաստանի ամենալաւ ապագայի համար, կանգնելով մի ընդհանուր դրօշակի տակ։

«Р. В.»

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

—

Լրագիրներից իմացանք, որ Վեհափառ Կաթողիկոսը դեռ ևս անցեալ տարի բարեհաճել էր կարգադրել՝ ընտրել յանձնաժողով ծխական դպրոցների համար նոր կանոնադրութիւն և ծրագիր մշակելու համար։ Թէ որպիսի ծրագիր և կանոնադրութիւն մշակեց յանձնաժողովը, առ այժմ յայտնի չէ. միայն թէ, ինչպէս յայտնի է, մայիսի 7-ին Էջմիածնում կայանալու ուսումնական համագումար, որտեղ, ի միջի այլոց, քննվելու է այդ յանձնաժողովի մշակած ծրագիրը։

Յանձնաժողովը մշակած կը լինի հայոց դպրոցների համար անշուշտ ընդհանուր ծրագիր և հաւատացած ենք, որ նա ուշադրութիւն չէր դարձնի Վրաստանում բնակվող վրացախօս հայերի կարիքների վրա։ Ծագում է հարց՝ ինչպէս կազմակերպել սկզբում հայոց լեզուի դասաւանդութիւնը վրացախօս տեղերի հայոց դպրոցներում, որպէս զի դասաւանդութիւնը լինի արդիւնաւոր և դրական։ Հայախօս երեխան, մտնելով դպրոց, մի քիչ ժամանակից յետոյ, իսկոյն—սկսում է կարդալ գրել։ Այդպէս էլ պէտք է լինի։ Բոլորովին ուրիշ պայմաններում են գտնվում վրացախօս հայ մանուկները. սրանք մտնում են դպրոց մի բառ չիմանալով հայերէն։ Սրանց նախ հարկաւոր է հայերէն խօսել սովորեցնել. ապա՝ կարդալ-գրել։

Այս հարցի մասին մենք առիթ ենք ունեցել առաջ էլ գրելու (տ. «Մշակ» 1905, № 94)։ Ընդունելով, որպէս հիմք օտար լեզուի ուսման, այն մեծ մանկավարժական սկզբունքը, թէ օտար լեզուի ուսումը սկզբում պէտք է կատարվի մանուկին ծանօթ լեզուի օգնութեամբ, մենք առաջարկում էինք մտցնել վրացախօս տեղերի ուսումնարաններում (ուսումն վրաց լեզուի), որի համար անհրաժեշտ էինք համարում կազմել մի դասագիրք, որը հայերէն և վրացերէն բնագիր ունենար։ Այդ դասագիրքը կը թեթևացնէր մանուկների աշխատանքը հայերէն սովորելու համար։ Բուն վրաց լեզուի ուսման մենք կարևոր էինք համարում յատկացնել ոչ պակաս քան երեք ամիս։

Սակայն այս ասված է սրանից տասն և մէկ տարի առաջ։ Այժմ, աւելի նպաստաւոր պայմաններում, կարելի է այս հարցի մասին աւելի համարձակ և ազատ խօսել։

Անհրաժեշտ է սահմանել այնպիսի ծրագիր, որով հայ երեխաները մի տարով [illegible] լինեն հայախօս երեխաներից։ Ամբողջ լուսաւոր աշխարհն ապացուցում է, թէ դասաւանդութիւնը պէտք է լինի մանուկին հասկանալի լեզուով, թէ երեխան սկզբնական ուսումը պէտք է ստանայ այն լեզուով, որով նա խօսում է, հետևաբար բոլորովին սխալ է, հակամանկավարժական է և նոյն իսկ բռնութիւն է—ոչ մի փոփոխութիւն չանել ծրագրի մէջ հայախօս և վրացախօս երեխաների համար: Վիրախօս ութը տարեկան երեխան մտնում է դպրոց մի բառ չիմանալով հայերէն և իսկոյն նրա հետ սկսում են խօսել անծանօթ լեզուով. նա անհասկանալի լեզուով պէտք է կարդայ, գրէ, պատմէ. նա պէտք է վճռէ Թուաբանական խնդիրները, պատմէ կրօնից տէրունական տօները: Կարելի՞ է այսպիսի դաստիարակութիւնը գրաւիչ լինել երեխայի համար: Ո՛չ, ո՛չ և ո՛չ...

Ինչպէս յայտնի է, Ռուսաստանում քաղաքային դպրոցներն ունեն վեց տարւայ կուրս: Կովկասում շատ քաղաքային դպրոցները, որոնք գտնւում են տեղացի ազգաբնակութեան մէջ, բացի վեց հիմնական բաժանմունքից ունեն և մի առանձին նախակրթարան, որտեղ տեղացի երեխաները մի տարի սովորում են ռուսերէն և ապա անցնում առաջին բաժանմունքը: Կառավարութիւնն այս արել է, կամենալով դիւրութիւններ տալ տեղացի ժողովուրդներին, որպէս զի նրանք միանգամից չընկճվեն:

Ահա հէնց այդպիսի նախակրթարաններ պէտք է հիմնվեն վրացախօս տեղերի դպրոցներում աւելի լայն մանկավարժական սկզբունքներով: Նախակրթարանից երեխան պէտք է մանէ առաջին բաժանմունքը, որի ծրագիրը պէտք է ընդհանուր լինի հայախօս տեղերի հետ: Իսկ ինչպիսի ծրագիր սահմանել նախակրթարանի համար: Նախակրթարանի համար, որպէս ուղեցոյց, նպատակայարմար է ընդունել Կովկասի նախկին Փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի 1881 թ. յունվարի 13-ին հաստատած տեղական դպրոցների համար ծրագիրը, որ և անցեալ տարի վերահաստատեց ներկայ Փոխարքան:

Այդ ծրագրով, ինչպէս յայտնի է, տեղացի երեխաներն առաջին տարին սովորում են կարդալ-գրել մայրենի լեզուով, Թուաբանութիւնը սովորում են ռուսաց և մայրենի լեզուներով, իսկ երկրորդ կիսամեակից սովորում են ռուսերէն խօսել, գրագիտութիւն սկսելով երկրորդ բաժանմունքից:

Ահա մօտաւորապէս այդպիսի ծրագիր պէտք է սահմանել և մեր նախակրթարանների համար: Ընդունելով, որ Վրաստանում մայրենի հայոց լեզուին փոխարինում է վրաց լեզուն, հետևաբար և վիրախօս հայ երեխաները պէտք է սկսեն ուսումն նախ այս լեզուից: Նախակրթարանի համար կարելի է ընդունել դասերի այսպիսի աղիւսակ. վրաց լեզու՝ շաբաթական 6 դաս, վրաց վայելչագրութիւն՝ 2 դաս, հայոց լեզու՝ (առաջին կիսամեակից սկսած) 3 դաս, Թուաբանութիւն՝ 4 դաս, երգեցողութիւն՝ 2 դաս, նկարչութիւն՝ 1 դաս, ընդամենը շաբաթական 18 դաս: Հայոց լեզուից պէտք է նախակրթարանում սովորեցնել հայերէն խօսել, սահմանելով բառային վարժութիւններ, ինչպիսին ունեն օրինակ Կորնիլովի կամ Չերնեաևսկու ռուսերէն խօսելը սովորեցնելու համար, իսկ գրագիտութիւնը սկսել առաջին բաժանմունքից: Կրօնը նախակրթարանում չը պէտք է աւանդվի, իսկ Թուաբանութիւնն և երգեցողութիւնը պէտք է աւանդվեն վրացերէն և մասամբ հայերէն:

Այսպիսով մանուկները տարւայ վերջը կիմանան վրացերէն ազատ կարդալ-գրել, որ (Վրաստանում անհրաժեշտ է), հայերէն խօսել հասկել: Այնուհետև նրանք հեշտութեամբ կարող են ընթանալ ընդհանուր ծրագրով, պահպանելով վրաց լեզուի ուսման համար յաջորդ բաժանմունքներում շաբաթական մէկ կամ երկու դաս:

Առաջարկածս ներկայ ծրագիրն արտաքին կողմից երևում է օտարոտի և նոյն իսկ յանդուգն, սակայն եթէ մի կողմի Թողնենք քաղաքականութիւն, ազգայնական շօվինիզմը, և հարցին նայենք լայն մանկավարժական և գործնական հայեացքով, կը գտնենք, որ նա ընդունելի է և արդիւնաւոր:

Ապրելով Վրաստանում, վիրախօս հայերի համար անհրաժեշտ է նաև վրաց լեզուի ուսումը: Ինչպէս հայ մանուկները Թիւրքիայում սովորում են Թուրքերէն, Պարսկաստանում՝ պարսկերէն, նոյնպէս էլ Վրաստանում, բացի պետական լեզուից, նրանք պէտք է սովորեն և վրացերէն: Շատերն ասում են, Թէ ինչի համար է հարկաւոր վրացերէն սովորեցնել, քանի որ վիրախօս հայ մանուկներն առանց դպրոցի էլ դրսում սովորում են վրացերէն կարդալ-գրել: Իսկ ինչի համար է դպրոց: Ինչու պէտք է դպրոցը բաժանվի կեանքից. ինչու այն բանը, որ հարկաւոր է կեանքում, դպրոցը չը պէտք է տայ և վերջապէս ինչու աւելորդ ծախսեր անել դրսում վրացերէն սովորեցնելու համար:

Վրացիքը մեր վաղեմի բարեկամ ազգ են: Վրացիներն երբէք հայերին չեն ճնշել, հալածել, աւերել, կոտորել, Թալանել: Վրացիքը դարեր առաջ ուրախութեամբ հիւրընկալել են հայերին, հողեր յատկացրել բնակվելու և դիւրութիւններ տուել կուլտուրապէս առաջադիմելու: Վրաստանի հայը խաղաղ զարգացրել է իր կուլտուրան և նիւթապէս ապահովվել. Թուրքական գազանութիւնները նրան յայտնի չեն: Եւ այս բոլորից յետոյ մեծ ապերախտութիւն չի լինի մեր կողմից Վրաստանի հայոց դպրոցներում վրացերէն չը սովորեցնել, արհամարհել նրանց լեզուն, մանաւանդ, որ ինքներս լինելով վիրախօս՝ այդ լեզուով խօսում ենք ընտանիքներում, դրսում, վրաց լեզուով նամակներ գրում, հաշիւներ պահում և այլն:

Հրաւիրում ենք այս հարցի վրա այն պատգամաւորների ուշադրութիւնը, որոնք Վրաստանից պէտք է գնան Էջմիածին դպրոցական համագումարին մասնակցելու:

Սղնախ. Յ. Գրիգորեան

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԻԹՈՎ

VI

Առողջապահական գիտելիքների ուսուցումը

Ուսումնարանական առարկաների շարքում պէտք է վայել տեղ բռնեն վերջապէս այն գիտելիքները, որոնք իրապէս կենսական, ուրեմն և գործնական են, այն է առողջապահութիւնը, տարրական ախտաբանութիւնը և հիւանդախնամութիւնը:

Պարտք եմ համարում գումարվելիք ժողովի առիթով մի անգամ ևս կանգ առնել դպրոցների ծրագրի մէջ այս գիտութիւնները մտցնելու անհրաժեշտութեան մասին. մի բան որ ես ահա 15 տարի քարոզում եմ թէ «Մշակի» մէջ, թէ իմ Թերթի «Առողջապահիկի» էջերում և թէ հեղինակութիւններիս մէջ: Մինչև այժմ իմ և ուրիշ բժիշկների ձայնը արձագանք չէ գտել դպրոցի վարիչների համոզմունքի մէջ: Յուսով ենք, որ ժողովրդի ներկայացուցիչների ժողովը վերջապէս այս անգամ իր պահանջը կը դնի խստօրէն:

Առողջապահիկ գիտելիքների բացակայութիւնը մեր դպրոցների ծրագրի մէջ մեր ուսումնարանական սիստեմի յետամնացութեան ապացոյցներից մէկն է:

Մինչդեռ Եւրոպայում առողջապահիկ գիտելիքները աւանդվում են ամենատարրական ուսումնարաններում, մեր մէջ նոյն իսկ Թեմական դպրոցները և մեծանուն Ճեմարանը զուրկ են այդ կենսական առարկայից:

Թէև տարրական բաներ ենք ասելու, բայց ստիպված ենք ասել, որովհետև մեր մէջ երբեմն հարկ է լինում աքսիօմներն էլ ապացուցել. առողջապահութեան գիտելիքները պէտք է աւանդվեն ամեն աստիճանի և ամեն տիպի ուսումնարաններում: Նրանք պէտք է մտցվեն և՛ տարրական և՛ միջնակարգ դպրոցներում, պատկառելի տեղ բռնելով նրանց ծրագրի մէջ:

Ամենից առաջ կուզէինք ցրել այն Թերի կարծիքը, որը կազմած է առողջապահութեան մասին: Տեղեակ չը լինելով այդ գիտութեանը, կարծում են, Թէ նա մատչելի է միմիայն բժշկին: Դա սխալ է: Առողջապահիկ կանոնները շատ որոշ և պարզ են: Ի հարկէ, այդ կանոնների գիտնական հիմունքները շատ բարդ են և մասնագէտին միայն մատչելի, բայց երեխան պէտք չունի որոշ կանոն իւրացնելու համար ֆիզիկական, քիմիական, հոգեբանական, անատոմիական և օժանդակ գիտութիւնների նրբութիւններին գիտենալ: Օրինակ, երբ երեխային սովորեցնում էք ուղիղ նստել գրելու ժամանակ, կուրծքը դէմ չը տալ սեղանի եզրին, կամ աչքերը չը մօտեցնել տետրին, կարիք չը կայ մեկնելու նրան այդ կանոնի անատոմիական, ֆիզիօլօգիական հիմունքները, այլ կը բաւականանաք ասելով՝ Թէ. «կուրծքդ կը ցաւի, մէջքդ կը ծռվի, աչքերդ կը վնասվեն»: Այն հիմունքները կարող էք և պէտք է մեկնէք միջնակարգ դպրոցների աշակերտներին, որոնք անցել են անատոմիա, ֆիզիօլօգիա, ֆիզիկան և այլ գիտութիւններ:

Առողջապահութիւնը մատչելի է ամեն հասակի երեխայի: Հասկացող մայրը առողջապահութիւն է սովորեցնում իր երեխային ամենամատաղ հասակից: Ինչպէս տեսնում էք, այստեղ սովորեցնելու եղանակն է գլխաւոր բանը: Փոքր երեխաները ընդունում են այդ կանոններն իբրև պատգամներ, աւելի մեծերը (տարրական ուսումնարաններում) Թեթև, մանկան մատչելի բացատրութիւններով, իսկ հասակաւորներին աւելի գիտական ձևով:

Տարրական ժողովրդական ուսումնարաններում առողջապահութիւնը սկզբնական տեղեկութիւնների ձևով պէտք է աւանդվի: Էական շրիւններն են միայն տրվում երեխային առանց գիտական մեկնութիւնների:

Ուսման հէնց առաջին տարիներում, վարժուհին տեղեկութիւններ տալով շրջապատող բնութեան հետ (օդի, ջրի, հողի, կենդանիների, բոյսերի), պէտք է նրանցից դուրս բերի առողջապահիկ կանոններ: Այսպիսով այդ տեղեկութիւնները կը վերածվեն գործնականի: Վերցնենք մի օրինակ:

Վարժուհին տեղեկութիւններ է տալիս ջրի մասին: Երեխան սովորել է Թէ ինչ է ջուրը, ինչ օգուտներ է տալիս նա մարդին, ինչ տարբերութիւն կայ աղբիւրի, գետի, ջրհորի և ծովի ջրերի մէջ: Այն ժամանակ վարժուհին շատ ճիշտ կարող է խօսել ջրի մասին առողջապահութեան տեսակէտից: Նա կը բացատրի օր. Թէ ինչ է ծարաւը, կասի որ մեր արեան մէջ էլ, մեր մսերի մէջ էլ ջուր կայ, բոյսերի մէջ էլ: Կը բացատրի Թէ ջրերից որը կարելի է գործ ածել, ինչու պէտք է մաքուր ջուր գործ ածել, ինչու ճահիճի ջուր չէ կարելի խմել, ինչու չէ կարելի սառ ջուր խմել քրտնած ու տաքացած ժամանակ, և այլն:

Կը խօսի լողանալու օգտակարութեան ու կեղտոտութեան վնասակարութեան մասին: Կը սովորեցնի, Թէ ինչպէս լուացվել և ինչպէս չորացնել երեսն ու ձեռները: Ինչու կեղտոտ ձեռներով վնաս է հացի նստել: Ինչու պէտք է գերադասել եփ տուած ջուրը՝ գետի հում ջրից. խօսել լուացքի մասին, ինչպէս պէտք է լուանալ շորերը, որ մաքրվեն ու անվնաս դառնան: Ինչու պէտք է ջրշքնել գետինը աւելելուց առաջ... ու հազար տեսակ այսպիսի գործնական հարցեր, նոյն ձևով, ի հարկէ, պէտք է օգտվել և հողի, բոյսերի, պտուղների, օդի մասին տեղեկութիւն տալիս:

Աւելի բարձր դասարաններում, արդէն գիտելիքներն աւելի կընդարձակվեն և կը կատարվեն սիստեմատիկ կերպով—առանձին առողջապահութեան դասերի մէջ, (շաբաթական 1—2 դաս): Ուրեմն առողջապահութիւնը այդ դասարաններում պէտք է աւանդվի ինչպէս առարկայ:

Ինչ էլ լինի ծրագիրը, որով աւանդվելու է այդ առարկան, նա պէտք է յարմարվի բնական գիտութեան մասին տուած տեղեկութիւններին և ընդհակառակը, այս վերջիններս պէտք է յարմարվեն առողջապահիկ գիտելիքներին: Այսպիսով երկու առարկաները անպայման պէտք է սերտ կապով շաղկապված լինեն, այնպէս որ միմեանց լրացնեն, միմեանց բացատրեն, որպէս զի վերջը ձուլվեն ու կազմեն մի ամբողջութիւն:

Տարրական դպրոցների բարձր դասարանների մէջ առողջապահութեան հետ Թեթև տեղեկութիւններ պէտք է տալ նաև հիւանդներին սկզբնական օգնութիւն հասցնելու մասին, ոչ իբրև առանձին առարկայ, այլ իբրև գործնական հետևանք առողջապահիկ կանոնների:

Առողջապահական գիտելիքների ծրագիրը տարրական դպրոցների համար պէտք է կազմվի մանկավարժների և բժիշկների խորհրդակցութեամբ:

—

Գանք այժմ միջնակարգ դպրոցներին: Այստեղ արդէն աշակերտները բաւականաչափ պատրաստված են աւելի գիտնականօրէն իւրացնելու առողջապահութեան վերաբերեալ խնդիրները: Նրանք տեղեկութիւններ ունեն բնագիտութեան, անատոմիայի, ֆիզիկայի, քիմիայի մասին, իսկ սրանք առողջապահութեան օժանդակ գլխաւոր առարկաներն են: Ուրեմն այս դպրոցներում առողջապահութիւնը պէտք է անցնել իբրև առանձին գիտութիւն, առանձին դասերում, ընդարձակ ծաւալով:

Այս առարկայի դասաւանդութիւնը պէտք է կապել բնական գիտութիւնների հետ, այնպէս որ որոշ ժամանակի ընթացքում բոլոր առարկաների կուրսերը միմեանց լրացնեն: Իբրև օրինակ, ենթադրենք, որ խօսվում է շնչառութեան առողջապահութեան մասին: Այդ միջոցին բնախօսութեան ուսուցիչը պէտք է խօսէ արեան շրջանառութեան և շնչառութեան մասին: Այս ձևով միայն հնարաւորութիւն կը տրվի ուսուցիչներին ամեն տեսակէտից լուսաբանել գիտական հարցերը, նրանցից գործնական և օգտակար արդիւնք դուրս բերելու համար:

Առողջապահութեան դասընթացը կը բաժանվի գոնէ երկու վերջին դասարանների մէջ. համապատասխան ձևով պէտք է կարգաւոր և օժանդակ առարկաների աւանդումը:

Բացի առողջապահութիւնից, միջնակարգ դպրոցներում աւանդվելու են հետևեալ երկու գիտութիւնները.—տարրական ախտաբանութիւն, և հիւանդախնամութիւնը: Առաջինը ամփոփում է իր մէջ տեղեկութիւններ յաճախ պատահող հիւանդութիւնների մասին: Իսկ հիւանդախնամութիւնը շօշափում է հիւանդին տալիք անմիջական և տեղական օգնութեան միջոցները,—այն ինչ որ պարտաւոր է գիտենալ ամեն զարգացած անհատ:

Այս վերջին գիտութիւնը սովորացնում է. հիւանդի ջերմը չափելը, նրան պառկեցնելը, կերակրելը ու խմեցնելը, լուծողական տալը, յօդնա դնելը, վէրքեր խնամելը, խեղդվածին ուշքի բերելը, օձի, կարիճի խածածին առաջին օգնութիւն հասցնելը, ծաղիկ կտրելը, վարակիչ հիւանդներին առանձնացնելը, և այլն:

Ախտաբանութիւնը և հիւանդախնամութիւնը կարելի է միացնել և միասին անցնել. դասաւանդութիւնը պէտք է յանձնվի, ի հարկէ, բժշկի: Յիշած երեք առարկաների ծրագիրը պէտք է որոշվի բժիշկների ձեռով, խորհրդակցութեամբ բնական գիտութիւնների մասնագէտների հետ:

Այսպիսով միջնակարգ դպրոցն աւարտած պատանին բաւականաչափ տեղեկութիւններ դուրս կը տանի իր հետ առօրեայ կեանքի համար: Յիշած գիտելիքների կարևորութիւնը ամեն զարգացած մարդու համար, կարծում ենք, ապացոյցի պէտք չունի: Բացի գործնական տեսակէտից, կայ նաև մի այլ օգուտը, որ այդ դրական գիտութիւնների իւրացումն ամենազօրեղ զէնքն է նախապաշարմունքների ու սնոտիապաշտութիւնների դէմ մաքառելու համար: Մեր ժողովրդի կեանքը լիքն է աղէտներով, որոնք ծնունդ են կեղծ հաւատալիքների: Հարիւր տեսակ կեղծ սրբեր շահագործում են նրա միամտութիւնը: Ամեն ինչ սնոտիապաշտութիւն է մեր մէջ.—հիւանդութիւնները չարքերից են, բժշկութիւնը գերբնական ոյժերի միջոցով է կատարվում... Բացի այդ, մեր երկրի բժշկութիւնը հարիւր տեսակ ջադուների, պառաւների, մօլլաների, Թիզ չափողների, դարի գցողների, աղօթողների և այլ սրանց նման չարամիտ ու ագէտ սրիկաների ձեռքումն է, որոնք օգտվելով ժողովրդի տգիտութիւնից, կեղեքում են նրան ամենաանխիղճ կերպով, և միշտ վնասում հիւանդին. դա մի մեծ չարիք է, ուղղակի դժբախտութիւն, որի դէմ կարելի է կռւել միմիայն գիտութեան լոյսի ոյժով: Եւ ո՞վ պէտք է տարածէ այդ լոյսը, եթէ ոչ դպրոցը, ո՞վ է հասկացողը մեր գիւղերում, եթէ ոչ քահանան և ուսուցիչը, նոյն դպրոցի սաները: Ուրեմն տանք նրանց այդ լոյսը, Թո՛ղ նրանք լուսաւորեն մեր խաւար անկիւնները, Թո՛ղ իրանց օրինակով, իրանց հեղինակաւոր ձայնով քարոզեն ժողովրդին, փրկեն նրան զանազան ջադուների ու սրբերի ձեռքից: Այն ինչ մեր դպրոցաւարտները, կը հաւատաք, իրանք են քաջալերում ժողովրդի նախապաշարմունքները, աւելի ևս—իրանք մրցում են մօլլաների ու սրբերի հետ ժողովրդին կողոպտելու ու կեղեքելու գործում: Չէ՞ք հաւատում, դա փաստ է: Շատ օրինակներ ենք տպագրել «Առողջապահիկի» մէջ և մի շարք փաստեր էլ ունենք մեր դրասեղանի մէջ: Տգիտութիւն Թէ սրիկայութիւն է, այդ ինձ համար միևնոյն է. փաստն այն է, որ մեր դպրոցներից այդպիսի քահանաներ կարող են դուրս գալ...

Յետոյ նայեցէք ձեր շուրջը, հազարաւոր երեխաներ կոտորվում են զանազան վարակիչ հիւանդութիւններից,—ծաղիկը, դիֆԹերիտը տարէց տարի մանգաղում են մեր փոքրիկներին և չկան մարդիկ, որոնք հասկացողութիւն ունենային Թէ ինչ է վարակումն, ինչպէս կանգնեցնել զարհուրելի համաճարակները, ինչպէս զգուշացնել մանուկների պարբերական կոտորածը:

Մինչև այսօր դպրոցը ոչինչ չէ արել, մատը մատին չէ տուել օգնութեան փութալու ժողովրդին այս անտանելի ցաւի մէջ: Բժիշկներ... Բայց միթէ չը խրատվեցինք: Ամեն տեղից վիրաւոր, հիւանդ ժողովուրդը գիւղերում կոչ արեց բժիշկներին. քանիսը արձագանք տուին:

Ի՞նչ անուն կուզէք տուէք բժիշկներին, հայհոյեցէք ինչքան կամենաք, դրանով վէրքը չի լուանայ: Պէտք է ժողովրդի մարդկանից փոքր ի շատէ կրթել: Որքան բարիք արած կը լինէր դպրոցը, Թէ ամեն տարի գոնէ հէնց մի քանի ծաղիկ պատուաստողներ տար գիւղերին: Չը կարծէք Թէ դա մի դժուար գործ է, մէկ օրում կարելի է սովորեցնել: Նոյն իսկ դիֆԹերիտի բժշկութիւնը այնքան է հեշտացել, որ ամեն քիչ ու շատ հասկացող մարդ կարող է հարիւրաւոր մանուկներ փրկել: Ինչի՞ չանել, կասեմ նոյն, իսկ ինչ իրաւունքով չանել: Բաս ինչի համար է դպրոցը, եթէ նա կեանքին ոչինչ չէ տալիս, եթէ նա ամեն տարի դուրս է Թողնում տասնեակ մարդիկ, որոնք գնում են—ստուարացնում դատարկաշրջիկների կարգերը, որոնք «отъ герта отстали и къ Богу не пристали»:

Դասական, այն էլ Դելեանովների ու Տոլստոյների դասական սիստեմը, մեզ էլ է կերել: Նա բարոյապէս ծռմել—աղաւաղել է տասնեակ սերունդներ, լցրել է նրանց գլուխը անմարս դարմանով, կտրել է նրանց գետնից և կախել է օդի մէջ: Եւ երբ մի ժողովրդի մարդ, որը ապրել է ու տանջվել ժողովրդի ցաւերով, գոռում է. «տուէք մեզ կեանքի ու գործի մարդիկ», բլբլած բներից դուրս են գալիս փթած գաղափարներով «ղեկավարներ», որոնք ճգնում են ստուեր գցել նրանց գիտութեան վրա, անվայել ածականներ տալով նրանց քարոզած մտքերին:

Նրանք, կուրծք ծեծելով, բողոքում են ռեֆօրմների դէմ յանուն ազգի, որի ներկայացուցիչն են համարում իրանց, և ճգնում են հաւատացնել միամիտներին, Թէ մենք եկել ենք եկեղեցին կործանելու, նրա հարստութիւնները մեր ջիբն ածելու: Սակայն մեզ չէ զարմացնում հոգևորականութեան այս օրինակ վարմունքը: Չէ՞ որ մինչև այսօր էլ Ֆրանսիայում կղերականութիւնը կատաղի կռիւ է մղում դպրոցի աշխարհականացման դէմ. մեզ ցաւ է պատճառում այն բանը միայն, որ մեր մէջ ևս կարծես գլուխ է բարձրացնում կղերականութեան ճիւաղը,—մի բան, որի գոյութիւնը մենք անձամբ հերքում էինք:

Ո՞վ վախեցաւ ձեր ականներից ու սպառնալիքներից: Միթէ այնքան միամիտ էք, որ կարծում էք դրանցով կանգնեցնել պատմութեան յաղթական ընթացքը, որը սրբում տանում է այն ամենը, ինչ խանգարել, փտել է: Ի՞նչի էք ճգնում կանգնեցնելու ժամանակի հեղեղը, չէ՞ որ դուք էլ կը փշրվէք նրա Թափից...:

Բժ. Վ. Արծրունի

ՇՈՒՇԻՆ ՈՍԿԵՀԱՆՔ

Շուշում ապրող Տէր-Սարգսեան տոհմի վերջին արական սեռի շառաւիղ Ալէքսան-բէկ Տէր-Սարգսեանը, որը փաստաբանութեամբ է պարապվում, ինչպէս տեղեկանում ենք հաստատ աղբիւրից, Շուշու քաղաքային վարչութեան մի յայտարարութիւն է ներկայացրել, որ իր առանձին հետաքրքրութեամբ մի նորութիւն է Շուշու համար:

Նա գրում է, որ իր նախորդները Եգիպտոսից Կովկաս գաղթելով և պարապվելով հանքաբանութեամբ՝ հարիւրաւոր տարիներ առաջ երկրիս զանազան կողմերում ունեցել են զանազան մետաղների հանքեր և մի ժամանակ գործը հասցրել են ծաղկած դրութեան: Սակայն քաղաքական խառնակութիւնների ժամանակներում նրանք զրկանքներ կրելով և հալածվելով ներքին Թշնամիներից, ստիպված են եղել ծածկել այդ հանքերը և իրանք փախչել Վրաստան, որտեղ ապրում են եղել նրանց ընտանիքները և որտեղ նրանք ունեցել են մօտիկ ընտանեկան կապ վրաց իշխանազն տների հետ: Բայց այդտեղ ևս բախտը նրանց հալածելով՝ կորցնում են իրանց հարստութիւնը և իրանք փչանում՝ Վրաստանում տեղի ունեցած քաղաքական արշաւանքների և հալածանքների ժամանակ: Այդ ընտանիքից կենդանի է մնում Կորիւն անունով մէկը, պահված լինելով իր ազգական Թամարայի՝ վրաց Թագուհու արքունիքում: Եւ ահա այդ Կորիւնը իր ամբողջ տոհմի և հարստութեան փչանալուց յետոյ, Թամարա Թագուհու կամքով և հաւանութեամբ ամուսնանում է նրա իշխաններից մէկի աղջկան՝ Խորիշահի հետ, որի նշանի մատանին ահագին զմրուխտի ակով տալիս է Թամարան՝ իր մատից հանելով: Այնուհետև Կորիւնը Թամարայից մեծամեծ պարգևներ ստանալով՝ Խորիշահի հետ գալիս է Տաթև, իր քրոջ մօտ և ապրելով այդտեղ՝ մեռնում է, Թողնելով իրանից յետոյ մի որդի Միհրդատ անունով: Նա Թողնում է և մի ձեռագիր տետրակ, մագաղաթից, նկարագրելով նրա մէջ իր ազգի տոհմագրութիւնը, ցոյց տալով նրա ժառանգական հարստութեան հանքերի տեղերը և պարտաւորութիւն դնելով իր ժառանգների վրա, որդւոց որդի, որ յաջորդաբար միմեանց յայտնեն հանքերի տեղերը մինչև այն ժամանակ, երբ նրանցից մէկն ու մէկը ձեռնհաս կը լինի ձեռնարկելու նրանց յայտնագործութեան և մշակման: Այդ տոհմի վերջին յաջորդը, Տէր-Սարգիս անունով, Շուշի քաղաքի հիմնարկութեան օրից տեղափոխվում է այնտեղ, բերելով իր հետ իրանց տոհմագրութեան ձեռատետրը և Խորիշահ տատի մատանին, որոնք անցնելով աւանդական կարգով մինչև իրան՝ Ալէքսան բէկին, յայտնի է դառնում նրան ևս ծածկված հանքերի շրջանը: Ալէքսան բէկը պահելով իր մօտ մատանին և ձեռատետրը՝ նպատակ չէ ունենում հանքատեղերի գաղտնիքը երևան հանել, այլ նոյն աւանդական կարգով յանձնել այդ ձեռատետրը իր ժառանգներին, սակայն անցեալ տարւայ օգոստոսեան արհաւիրքները և Շուշու հրդեհը փչացնելով և այրելով նաև Ալէքսան-բէկի տունը, նրա մէջ այրվում է և ձեռատետրը:

Ահա այդ հանգամանքը նրան ստիպում է անյայտութեան մէջ չը Թողնել Շուշու ոսկեհանքի անունը և յայտնում է պատշաճաւոր իշխանութիւններին, որ ինքը հնարաւորութիւն ունենայ պեղումներ անելու և հանքը բաց անելու, ցոյց տալով որ դա գտնվում է Շուշի քաղաքի շրջագծում:

«Չիք չարիք առանց բարեաց»: Ո՞վ գիտէ, գուցէ այդ ձեռագրի այրվելը պատճառ դառնալով Շուշու ոսկեհանքի տեղը յայտնվելուն, մի բարութեան դուռ բաց կանի այրված ու աւերված քաղաքի համար:

Հարկաւոր է սկսել գործը:

Հարկաւոր է դրամագլուխ:

Դա մեր միլլիօնատէրերի, առաւելապէս Շուշեցի դրամատէրերի գործն է:

Ի՞նչ աւելի բաղդաւորութիւն քան այդ, եթէ իսկապէս մեր քաղաքում ոսկու հանք բացվի:

Տ.

ԱԽԱԼՑԽԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Նամակ Ախալցխայից)

Կիրակի, ամսիս 16-ին, ս. Փրկիչ եկեղեցում կայացաւ Ախալցխայի բոլոր հայ ծխականների ընդհանուր ժողովը Ախալցխայի չորս եկեղեցիների կողմից չորս պատգամաւոր և չորս անձնափոխանորդ ընտրելու, որոնք ըստ նոր հրահանգի, քաղաքիս կողմից պէտք է մասնակցեն Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի նոր հոգաբարձական ընտրութիւններին: Ինչպէս յայտնի է, այդ առիթով Թէև նախընթաց կիրակի ժողով էր նշանակված, սակայն հրաւիրված էին միայն ս. Փրկիչ եկեղեցու ծխականները, որի դէմ բողոքելով՝ այս ընտրութեանը, վիճ. կօնսիստօրեայի Թոյլտուութեամբ, հրաւիրված են բոլոր եկեղեցիների ծխականները, ինչպէս մեզանում միշտ եղել է:

Դժբաղդաբար այս ընտրութիւնը կատարեալ կօմիկական բնաւորութիւն ունէր, որի մասին արժէ քիչ երկար խօսել, Չը նայելով որ այս ժողովին, որպէս քաղաքիս բոլոր ծխականների առաջինը՝ պահանջվում էր ծխականների որոշեալ Թիւ, մօտ 400 հոգի, սակայն հաւաքվել էին 60—70 մարդ, ուստի օրէնքի համաձայն չը պէտք է ժողովը կայանար. սակայն ո՞վ էր դրա վրա նայողը: Այդ մարդկանց համար աւելի ձեռնտու էր ծխականների քչութիւնը, ուստի ժողովը բանալով նախագահ ընտրեցին օրիորդաց ուսումնարանի աւագ ուսուցիչ Յակոբ Մուրադեանին: Ապա ժողովը սկսեց ընտրութեան մասին հոգալ:

Ինչպէս ժողովում երևաց, մեր այդ դիմակաւորները պատգամաւորներ ընտրել ու ժամանակ չէին նայում Թէ արդեօք արժանաւոր է կամ գործին ո՞րքան օգուտ կարող է բերել—դրա մասին չէին մտածել:

Ժողովում ներկայ եղող մի քանի անձինք առաջարկեցին Ախալցխայի կողմից պատգամաւորներ ընտրել Թիֆլիսաբնակ ախալցխացիներից, քանի որ այնտեղ կան այդ ընտրութեան մասնակցելու արժանաւոր և գործին հմուտ անձնաւորութիւններ, որով ուսումնարանը կազատվի իզուր ճանապարհածախսերից:

Պ. նախագահը, յայտնեց, որ ըստ հրահանգի պէտք է ընտրել այնպիսի Թեկնածուներ, որոնցից նախապէս համաձայնութիւն ստացված է ժողովի օրը և քանի որ նրանցից նախապէս համաձայնութիւն չէ ստացված, ուրեմն չէ կարելի ընտրել նրանց...

Սակայն առաջարկողները խնդրեցին նախագահից, որ այդ դէպքում ժողովը մի քանի օրով յետաձգվի և իրանք կը ստանան նրանց համաձայնութիւնը հեռագրով: Ժողովում առաջացան այդ առիթով վիճաբանութիւններ և իրարանցում, սպառնալիքներ և այլն: Վերջը հարցը դրվեց քուէարկութեան: Հակառակ կողմը ցանկացաւ, որ գոնէ քուէարկութիւնը գաղտնի լինի—սակայն պ. նախագահից չընդունվեց, ուստի գաղտնի քուէարկութիւն պահանջողները տեսնելով որ ոչ մի արդարութիւն չը կայ ժողովում, մեծամասնութիւնը հեռացաւ ժողովից: Օգտվելով հանգամանքից մնացածները վճռեցին ժողովը չը յետաձգել և ոչ օտարաբնակներից և ոչ էլ նոյն իսկ ժողովին չեկած քաղաքացիներից ընտրել, այլ նշանակել պատգամաւորական Թեկնածուներ միմիայն ժողովին ներկայ եղող ծխականներից, (այսինքն պարզապէս իրանցից):

Բաժանվեցին Թերթիկներ Թեկնածուների անուններ գրելու և նշանակվեցին Թերթիկներով մի քանի անձինք: Սակայն ժամանակը ուշ լինելով ժողովի շարունակութիւնը կատարվեց երեկոյեան ժամը մօտ 6-ին: Այս ժամանակ այդ պարոնները իրանց Թեկնածուներին ընտրելու համար ամեն աններելի և դատապարտելի միջոցներ ձեռք առան: Հաւաքեցին անչափահասներին և այլն (փաստերը ականջալուր են). ո՞վ կարող էր այդ ապօրինի վարմունքի դէմ բողոքել. իսկոյն ձայնը խեղդվում էր: Դրվեցին տուփեր 10 Թեկնածուների համար և սկսվեց քուէարկութիւնը: Ահա այսպիսի խայտառակ ձևով քուէարկութիւնը կատարվելով պատգամաւորներ ընտրվեցին հետևեալ պարոնները՝ Խորէն Ճարպեան, (74 սպ. 22 սև) Մարտիրոս Ինճիկեան, (68 սպ. 28 սև), Յովակիմ Եդեեան (68 սպ. 28 սև) և Կարապետ Գրիգորեան (67 սպ. 29 սև): Իսկ սրանց անձնափոխանորդներ՝ Տ. Ղանալանեան (61—35), Ն. Իզիթխանեան (51—46), Ա. Անիսոնեան (49—48) և Մ. քահ. Աղնաւուրեան (41—53): (Վերջինս բոլորովին ներկայ չէր): Քուէարկութեան խառնակութիւնը նոյն իսկ ակներև է քուէների Թւից, որը մէկը միւսին չէ համապատասխանում: Ահա մեր պատգամաւորների ընտրութեան տուած արդիւնքը: Այդ հակաժողովրդական ընթացքը քաղաքիս ժողովրդեան մեծամասնութեան արդարացի զայրոյթն է յարուցել:

Խ. Դ.

Ապրիլի 7-ին

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Համերգ Սիմֆերոպոլում.—Թուրքական ներկայացում Դերբէնդում):

I

Սիմֆերոպոլ, ապրիլի 12-ին

Անցած կիրակի տեղիս հայոց ուսումնարանի դահլիճում կայացաւ կօնցերտ, որի արդիւնքը յատկացրված էր տեղական երգեցիկ խմբի ֆօնդի օգտին: Կօնցերտի ծրագիրը բաղկացած էր երկու մասից. իւրաքանչիւրից յետոյ դրվեցին կենդանի պատկերներ: Կօնցերտին մասնակցում էր երգեցիկ քառաձայն խումբը, որ երգեց վեց հայկական երգեր, ռուս մանդօլինիստների մի խումբ, որ կատարեց մի քանի կտոր, երեք հայ օրիորդներ, որոնք նուագեցին դաշնամուրի վրա և մի ռուս օրիորդ, որ նուագեց ջութակի վրա:

Աւելորդ մանրամասնութիւնների մէջ չը մտնելու համար կասենք, որ կօնցերտը ընդհանրապէս բաւարար անցաւ: Նոյնը կարող ենք ասել և կենդանի պատկերների մասին: Բայց մենք մի քանի խօսք կասենք կօնցերտի և կենդանի պատկերների նիւթի առիթով:

Առնենք խմբական երգեցողութիւնը: Պէտք է խոստովանել, որ խմբի մէջ կան լաւ ձայներ, բայց նկատվում է, որ երգերի ընտրութիւնը բացակայում է: Հայկական գեղարուեստի մասին ճաշակ տալ հայ հասարակութեան—ահա Թէ ինչ բան պէտք է աչքի առաջ ունենայ ու չը մոռանայ երգեցիկ խմբի վարիչը: Խումբը գոհացուցիչ երգեց, բայց Թէ ինչ երգեց: Երգեց այն, ինչ որ այստեղ երգել էր սրանից տասը տարիներ առաջ հանգուցեալ Կարա-Մուրզան, ինչ որ այնուհետև երգվել է մի քանի անգամ: Կրկնելը վատ բան չէ, եթէ «միայն կրկնել» չէ: Ասացինք՝ խումբը վեց երգ երգեց, բայց սրանից ընդամենը մի ամիս առաջ նոյն այդ երգերից երեքը երգվել էին գրական երեկոյԹին: Այժմ էլ կրկնվեցին, ասես մեր երաժշտական գրականութիւնը այնքան աղքատ է:

Ապիկար են մեր վարիչները. նրանք չեն ուզում ճանաչել Եկմալեանի, Կոմիտաս վարդապետի և մեր նորագոյն երաժշտագէտների գործերը:

Դառնանք կենդանի պատկերներին: «Կեանք և մահ», «Ներշնչումն», «Գիտութիւն»: Գոնէ մի հատիկ բան էլ մեր կեանքից, մեր սրտի ու հոգու հարազատից լինէր, է...

Կօնցերտի մուտքը լաւ էր. դա ուրախալի է: Շնորհիւ եկեղեցական մշտական երգեցիկ խմբի կազմակերպութեան գլուխ կանգնած մարդկանց ջանքերի յոյս կայ, որ՝ երկար տարիների անյաջողութիւնից յետոյ՝ Սիմֆերոպոլի հայոց եկեղեցին վերջապէս կունենայ իր անհրաժեշտութիւններից մէկը՝ իր երգեցիկ խումբը:

Ասասւրնաձիրրալ

II

Դերբէնդ, 17 ապրիլի

Շաբաթ օրը, ապրիլի 15-ին հասարակաց ժողովարանի դահլիճում Թուրք ուսանողութիւնը մասնակցութեամբ հայ սիրողների, առաջին անգամ ներկայացրին պ. Վեզիրօվի «Մուսիբաթի Ֆախրուդին» պիէսան, 6 գործողութեամբ, յօգուտ հայ և Թուրք աղքատ աշակերտների:

Դահլիճը ծայր է ծայր լիքն էր հայ, Թուրք և ռուս հասարակութիւնով անտրակտներում նուագում էր ասիական սազանդարը, որով և Թուրք երիտասարդութիւնը պարում էր:

Պէտք է նկատել, որ Թուրք ջահելները փոքր ինչ իրանց լաւ չէին պահում. օրինակ ծխում էին դահլիճում, ներկայացման ժամանակ ծիծաղում էին, և անտեղի ծափահարում, որով խանգարում էին միւս լսողներին:

Դերակատարները, չը նայած որ առաջին անգամն էին բեմ բարձրանում, բացի հայ սիրողներից, բայց և այնպէս այնքան լաւ խաղացին, որ աւելին սպասել չէր կարելի. մանաւանդ հրաշալի կատարեց իր դերը Տ. Ա. Սերգէյեանը հուրի Նեանայի դերում, որի համար և արժանացաւ հասարակութեան բուռն ծափահարութիւններին և ստացաւ մի չքնաղ փունջ, Թարմ ծաղիկներից:

Լսում ենք, որ Թուրք մանկավարժների կուսակցութիւնը մտադիր է մօտ օրերումս դնել Թուրքերէն լեզուով «Թամահքեարըդ դուշման կազանըը» պիէսան:

Դարդիման

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նուխի, ապրիլի 11-ին

Թաթարական յարձակումներից կործանված Արէշ գաւառի հայ գիւղերի աղէտեալների օգտին ստացայ Կրասնովօդսկից նուխեցի պ. Արտաշէս Բեխայեանից իր նախաձեռնութեամբ հանգանակած մի հարիւր ութսուն և չորս ռուբլի 45 կոպ. գումարը. այս առիթով յայտնում եմ պ. Արտաշէս Բեխայեանին և բոլոր նուիրատու յարգելի պարոններին խորին շնորհակալութիւնս՝ մաղթելով բոլորին ամենայն աջողութիւն, որ փութացին եղբայրական պարտք կատարել:

Կովկասի զանազան քաղաքներում գտնվող նուխեցիներին խնդրում եմ օրինակ առնելով Կրասնովօդսկու հայ եղբայրներից՝ շտապեն օր առաջ իրանց առատաձեռն նուէրներով օգնել Արէշի իրանց աղէտաւոր և կարօտեալ հայ Թշուառ եղբայրներին և քոյրերին, որով միայն կարող են ապացուցանել որ սրտակից և կարեկից հարազատ եղբայրներ են հայ արէշցիներին:

Փոխանորդ հայոց Նուխու՝ Եղիշէ վարդապետ Ահարոնեանց:

—

Կիև, մարտի 30-ին

«Մշակի» № 64-ում Յ. Գրիգորեանց ստորագրութեամբ պարոնը Քարահունջ գիւղից գրած մի նամակում աշխատում է սևացնել մի անձնաւորութիւն, որը յամենայն դէպս Քարահունջին բացի օգուտից ոչինչ վատութիւն չէ արել: Մեզ յայտնի է Քարահունջի ո՞ր անկիւնից է փչում այդ քամին և ուրեմն հասկանալի է դառնում, որ այդ պարոնը առանց տեղեակ բացատրութիւններ տալու ընդգծում է միայն այն, ինչ որ նրա ու նրա նմանների նեղ-եսական հանգստութեանն է կարող ծառայել:

Քարահունջի լաւագոյն մասը գիտէ ինչ պատճառներ են խանգարել հօրս իր ժամանակին կատարել եղբօր ցանկութիւնը, բայց հասարակութիւնը կարող է դժգոհ լինել այն բանից, որ Միրզան չը կարողացաւ մինչև այժմս միջոցներ որոնել այդ խոչընդոտները վերացնելու և գումարը իր իսկական նպատակին ըստ կարելւոյն շուտ ծառայեցնել տալու: Այն վերջինս էլ մասամբ հասկանալի է դառնում այն տեսակէտից, որ գիւղի այդ «հանճարեղ արդարադատները» մինչև այժմս չը կարողացան գիւղական հասարակութեան մէջ այնպիսի վարք ու համակրութիւն ստեղծել, որ Միրզան կարողանար նրանց հետ միասին շտեմարանի գործը կազմակերպել: Գիւղի բուն ցաւերը Թողած այդ պարոնները ինտրիգներով ու բամբասանքներով էին զբաղված և այժմս նոյնը առանց քաշվելու շարունակում են հրապարակօրէն:

Շտեմարան հիմնելու ու նրան կանոնաւոր ընթացք տալու համար, հայրս սպասում էր իմ ակտիվ օգնութեան, իսկ ես չը կարողացայ վերջին տարիների ընթացքում գոնէ մի կարճ ժամանակով գնալ գիւղը: Հասկանալի է ուրեմն, որ Միրզան այդ գումարը տիրապետելու մտադրութիւն անգամ չէր կարող ունենալ, ինչպէս այդ պնդում է պ. Գրիգորեանը՝—այդ ոչ Թոյլ կը տար ինքը իրան Միրզան և ոչ էլ նրան՝ նրա որդիները: Հանգուցեալը եթէ վստահ չը լինէր իր եղբօր ազնւութեան վրա և ի նկատի ունենար «արդարադատների» բամբասանքով լի նամակները, որոնք խղճի ծերունին քիչ արիւն չէին պղտորում, երբէք նոր յանձնարարութիւններ չէր տայ նրան իր կտակում, նոյն գիւղի հասարակութեան վերաբերեալ:

Այդ 55,000 ր. գումարը, որ կտակել է հօրեղբայրս Քարահունջ գիւղի համար, պէտք է գործադրվի գլխաւորապէս իմ հայեցողութեամբ և կարելի է նրան ստանալ հանգուցեալի գործերի վարչութիւնից միայն այն ժամանակ, երբ կտակակատարները, որոնց մէջ է և պ. Դօլուխանեան, կտակի համաձայն նախօրօք վերջացրած լինեն բուն գործերի վերաբերեալ պարտքերը:

Խնդրում եմ «Մշակում» տպագրել այս երկտողս ի գիտութիւն ընթերցողների:

Շ. Տատուրեան

—

Ի նպաստ Կովկասի հայ սովածների շնորհակալութեամբ ստացել եմ Աստրախանի Թեմի առաջնորդ սրբ. Արիստակէս արքեպիսկոպոսից 72 ր. 70 կ., որ ժողովել է Գրօզնիա քաղաքում. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդից 3000 ր.: Նոր-Նախիջևանի փոխանորդ տ. Մուշէ վարդապետից 860 ր. որը, ժողոված է զանազան անձերից Գօրիս փոխանորդ տ. Խորէն վարդապետից 67 ր. այս գումարը ժողովել է Յովհաննէս քահանայ Միրիմանեանցը Ախալքալաք գիւղում, Շամախու Թեմի առաջնորդ սրբ. Անանիա արքեպիսկոպոսից 331 ր. 50 կ. (այս գումարից 259 ր. 50 կ. Աւշարեանց աւագ քահանան ժողովել է Ղուբայում, իսկ 62 ր. Մալեանց Մկրտիչ քահանան ժողովել է Սալեանում և 10 ր. Հաջիկարալ կայարանում): Ախալցխայի փոխանորդ տ. Սիօն վարդապետից 11 ր. 30 կ., որ նուիրել են տեղիս հայոց ուսումնարանի ուսուցիչները: Ընդամենը չորս հազար երեք հարիւր քառասուն երկու րուբլի յիսուն կ. (4342 ր. 50 կ.)։ Վերոյիշեա գումարն ամբողջապէս յանձնել եմ Նպաստամատոյց Յանձնաժողովի պ. գանձապահին։ Նուիրատուների անուանացուցակը մանրամասն տեղեկութեամբ իր ժամանակին կը տպագրվի առանձին գրքոյկով։

Առաջնորդ հայոց Վրաստանի և Իմերէթի՝
Գարեգին արքեպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Կովկասի ոստիկանական մասի կառավարիչ գեներալ Շիրինկինը զեկուցագրել է բարձր իշխանութեան այն մասերն, որ Կովկասի մասունը հանվի ժամանակաւոր գեներալ-նահանգապետներց իրաւասութիւնից։

—

Թիֆլիսում Ջրաբաշխական համագումարի— որ նշանակված էր մայիսին, բացումը ոռոգման օրէնքները քննելու համար, յետաձգվում է մինչև աշունը։

—

«Страна» լրագիրը հաղորդում է, որ ապրիլի 11-ին, Մօսկվայում, Լազարեան ճեմարանի բակում մի հորի մէջ պատահաբար գտել են զէնքերի պահեստ, որի մէջ գտել են 15 ատրճանակ, 10 Մօնտէ-Քրիստօ հրացան և 1000 փամփուշտ։ Հիմք կայ կարծելու, որ դեկտեմբերեան ժամանակից է մնացել այդ պահեստը։

—

Փոխարքան Թոյլատրեց մայիսի 8-ին նաւթարդիւնաբերողների ժողով գումարելու։

—

Երէկ ցերեկվայ ժամի 2-ին Պետերբուրգից վերադարձաւ Կովկասեան ոստիկանութեան գլխաւոր կառավարիչ և Փոխարքայի օգնական գեներալ-լէյտենանտ Շիրինկին։ Կայարանում նրան դիմաւորելու էին գնացել պաշտօնական անձինք։

—

Դուշէթի գանձարանից գողացված 315,000 րուբլին վճռել են լրացնել պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի զուտ արդիւնքից։

—

«Մշակի» երեկվայ համարում մենք հաղորդել էինք Ե. Ա. Դաւիդովի սպանութեան մասին։ Դէպքը տեղի է ունեցել հետեւեալ կերպով։ Ապրիլի 20-ին մօտաւորապէս առաւօտեան ժամի 10½-ին, Դաւիդովը դուրս գալով իր բնակարանից (Բէհբուդեան փողոց, սեփական տուն) գնում էր դէպի իր գրասենեակը, որ գտնվում է նախկին Արծրունու քարվանսարայում։ Երբ նա անցնելով Բէհբուդեան փողոցը, դարձաւ դէպի Պասկեվիչի փողոց և հասաւ Միրիմանեանի տանը, մի երիտասարդ մարդ յետևից հասաւ նրան և մի ուժգին հարուածով խենջալը ամբողջապէս խրեց նրա մարմնի մէջ, կրծքի մասում։ Դաւիդովը աղաղակեց ու վայր ընկաւ հէնց նոյն տեղում, իսկ վիրաւորող չարագործը յետ դարձաւ ու փախչելով Բեհբուդեան փողոցով դէպի ներքև անյայտացաւ։ Վիրաւորի աղաղակից օգնութեան վազեցին փողոցով անցնողները, բայց վիրաւորն արդէն մահվան տագնապումն էր։ Գալիս է և տեղապահ ոստիկանը ու մարմինը տեղափոխում են իր բնակարանը։ Ե. Ա. Դաւիդովը Թիֆլիսի ամենահին վաճառականներից մէկն է, 25 տարի շարունակ վարել է վաճառականների աւագի պաշտօնը, ունեւոր մարդ էր համարվում, մասնաւոր դիսկօնտներով էր պարապվում և Թիֆլիսի առևտրական բանկի համարեա հիմնվելու օրից սկսած նրա խորհրդի անդամն էր։ Նա մեռաւ 75 տարեկան հասակում և ամուրի էր։ Ինչպէս ենթադրում են սպանութիւնը կապ ունի փող կորզելու փորձերի հետ, որը երբեւ թէ մերժել էր։ Այդ դէպքը առեւտրականների վրա ճնշող տպաւորութիւն է թողել։

—

Վ. Բալիկաշվիլին Թոյլտուութիւն ստացաւ Թիֆլիսում հրատարակելու վրացերէն լեզուով ամենօրեայ մի լրագիր «Խմա» (ձայն) անունով, իսկ կ. Ֆօն-Կուչենբախը—Արթուր Լէյստի խմբագրութեամբ գերմաներէն լեզուով լրագիր «Kavk Post» (Կովկասեան պօստ) անունով։

—

«Իրշադի» ապրիլի 19-ի համարում կարդում ենք. «Գանձակ քաղաքի հայերից մի քանիսը պ. նահանգապետին խնդիրք են տուել, որ իրանք ցանկանում են ընդունել մահմեդական կրօնը։ Այս օրերումս մի հայ կին գնացել էր նոյնպէս նահանգապետի մօտ և յայտնել՝ որ ինքը ընդունում է մահմեդականութիւնը և խնդրել էր կանչել իր ամուսնուն և զաւակներին և հարցնել թէ արդեօք նրանք էլ կամենում են մահմեդական դառնալ։ Եթէ երբէք նրանք հրաժարվեն մահմեդական դառնալ, ես ինքս բացարձակ յայտնում եմ, որ մահմեդականութիւն եմ ընդունել և ես նրանից հետ ոչ մի կապ չունեմ այլ ևս։ Կնոջ խնդրքի համաձայն նահանգապետը իր ներկայութեան կանչեց նրա ամուսնուն և զաւակներին. սրանք էլ բացարձակ յայտնեցին, որ ընդունում են մահմեդական կրօնքը։ Դարձեալ Գանձակի գաւառի Բարսում անունն գիւղից երկու հայեր նահանգապետին յայտնեցին, որ իրանք ընդունում են մահմեդականութիւնը։ Նոյն հայերի ասածներին նայելով՝ Թիւրքիայից եկած խմբեր իրանց հետ շատ վատ են վարվում, և նրանք ինչ միտք որ սնուցանում են, ապագայի համար, իրանց դուր չէ գալիս և իրանք համոզված են, որ վերջը վատ պէտք է լինի»։

—

Այսօր, շաբաթ, ամսիս 22-ին, Թիֆլիսի ամառային ժողովարանում, 3-րդ իգական գիմնազիայի կից՝ ծնողական շրջանի խորհրդի նախաձեռնութեամբ կայանալու է մի զբօսանք՝ մանկական ներկայացումով և լօտերէյ-ալլէգրիայով, ի նպաստ ծնողական շրջանի ֆօնդի։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Ի. Ի. Տօլստօյը և ֆինանսների մինիստր Ի. Շիպօվը հրաւիրված չեն եղել Ցարսկօէ-Սելօյում կայացած և ոչ մի խորհրդակցութեանը։ Այդ բանը բացատրում են նրանով, որ պալատական կամերիլլիային լաւ յայտնի է յիշեալ մինիստրների անհամակրանքը դէպի սահմանադրութեան այն նախագիծը, որով Վիտտէ-Դուրնովոյի կաբինէտը մտադիր է բաղդաւորեցնել Ռուսաստանին։

—

Երկաթուղիների միութեան երրորդ համառուսական համագումարը յետաձգվում է մինչև մայիս ամիսը։ Միութեան կենտրոնական բիւրօն անհրաժեշտ է համարում դեռ սպասել որ անցնի ներկայ ծանր-անցողական ժամանակը, երբ չը կայ հաստատուն հող միութեան ապագայ տակտիկայի մասին խորհելու։

—

«Ն. Ժ.» թերթը հաղորդում է, որ Ցարսկօյէ Սելօյում կայացած խորհրդակցութեան ժամանակ նկատվեց, որ Պետական Դումայի գումարման նախօրեակում շփոթութեան մէջ են ընկել մինիստրները։ Մի շարք էական նշանակութիւն ունեցող հարցերի համար չը կարողացան ոչ մի եզրակացութեան գալ։ Սուր տարաձայնութիւններ ծագեցին։ Հարկաւոր կը լինի կամ նոր հիմնական օրէնքների նախագծեր կազմել կամ նրա մի քանի յօդուածները փոփոխութեան ենթարկել։ Հարցը կախված է օդի մէջ։

—

Բագուի արքունական պալատի նախագահը ապրիլի 18-ին զեկուցել է Բագուի գեներալ-նահանգապետին, որ քաղաքը բնակիչներից զանազան ժամանակներում հաւաքել է և գանձարան չէ մտցրել 234,500 րուբլի արքունական հարկեր։ Գեներալ-նահանգապետը պահանջել է բացատրութիւն քաղաքի վարչութիւնից։

—

Բագու քաղաքի գործարանային և նաւթահանքերի մուսուլման բանուորների լիազօրները ներկայացրել են Բագուի նաւթարդիւնաբերողների ժողովի խորհրդի նախագահ Դաստակեանին մի պատճառաբանված գրութիւն, որով պահանջում են. 1) Կառուցանել մուսուլման բանուորների համար նաւթային և գործարանային մասերում մզկիթներ և գերեզմանատներ։ 2) Խորհրդի հիւանդանոցների կից բանալ առանձին բաժանմունքներ մուսուլմանների համար, այն պայմանով միայն, որ այդ բաժանմունքներում ծառայողները և բժիշկները լինեն բացառապէս մուսուլմաններ։ 3) Բաց անել տեխնիքական և տարրական դպրոցներ դասաւանդելով առարկաները մուսուլման բանուորների մայրենի լեզուով։ 4) Նաւթարդիւնաբերութեան ժողովի խորհրդի մէջ ստեղծել կառավարչի երկրորդ օգնականի պաշտօնը, այն պայմանով, որ այդ պաշտօնը արվի մուսուլմանի։ 5) Մուսուլման բանուորների վարձագինը հաւասարեցնել միւս ազգութիւնների բանուորների վարձագնի հետ և 6) Բանալ ընթերցարաններ, գրադարաններ, ձրի ճաշարաններ և ներկայացումներ տալ մուսուլման բանուորների համար։ Բանուորների հետ բացատրվելուց յետոյ, պ. Դաստակեանը գտաւ նրանց պահանջը ուշադրութեան արժանի և խոստացաւ ներկայացնել նաւթարդիւնաբերողների մայիսի 6-ին կայանալիք ժողովին։ Իսկ ապրիլի 20-ին հրաւիրում էր լիազօրներին իր մօտ գալ մանրամասն կերպով քննութեան առնելու այդ ներկայացված գրութիւնը։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ապրիլի 19-ին, ցերեկվայ ժամը 3-ին գօրօդօվօյ Իշչենկօ, կամենալով բարձրանալ էլէքտրաքարշի վագօնը իր հրացանով, բայց չը աջողելով բարձրանալ, վայր ընկաւ վիրաւորվելով գլխից և ծնօտի ներքևի մասից։ Վնասվածը ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոցը, ուր բժշկական օգնութիւն հասցնելուց առողջացաւ և տուն վերադարձաւ։

—

Ապրիլի 19-ին, 9-րդ քաղաքամասում Նիկօլայեվսկի փող. № 30-ի պօդիեզդի մօտ գտնված է իգական սեռի մի երեխայ, փալասներում փաթաթած։ Երեխի մօտ գտել են մի նամակ, մէջը գրած՝ «չի կնքված, 4 ամսական է»։ Մանուկը ուղարկվեց Օլգինսկի Պօլիվանի ինստիտուտ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ի Ր Ք Ի Ա

Անկարգութիւններ Հայաստանում եւ Քիւրդիստանում.—Կ. Պօլսից հաղորդում են «Macédoine» լրագրին այս սոսկալի գազանութիւնների մասին, որ քիւրդերը կատարել են Հայաստանում։ Նրանք ջարդում էին անխտիր հայերին և Թիւրքերին և առաւելապէս կատաղաբար գործում էին Բիթլիսում, Վանում, Խարբերդում, Դիարբէքիրում և շրջակայ տեղերում. Համիդիէ գնդերի քիւրդական հեծելազօրքը եռանդուն մասնակցութիւն ունէր կոտորածին։

Քիւրդիստանում քիւրդերը յայտնել են, որ նրանք կը գաղթեն Ռուսաստան և Պարսկաստան, եթէ իրանց ցեղակիցները, որոնք զանազան յանցանքների համար բանտարկված են կամ ուղարկված աքսոր, թողութիւն չը ստանան։ Կ. Պօլսում սաստիկ անհանգիստ են այդ դէպքերի պատճառով և անկարգութիւնների վայրերը շտապով զօրքեր են ուղարկում Երզնկայից։ Խօսում են քիւրդ համիդիէ հեծելազօրքի արձակման մասին, թէև երկիւղ են կրում, որ այդ միջոցը կը ձգի Քիւրդիստանը նոյն դրութեան մէջ, որի մէջ գտնվում է այժմ Մակեդոնիան։

Թիւրքիայի պատրաստութիւնները։ Ալեքսանդրիայից հեռագրում են անգլիական լրագիրներին, որ Թիւրքական զօրքերը Ակաբիում ամրացնում են ծովափերը։ Սպասվում են աջակից զօրքեր Կ. Պօլսից։

—Կահիրէյից հեռագրում են, որ այստեղ հաւատում են այն լուրերին, թէ Թիւրքական բազմաթիւ զօրքեր են համախմբվում Դամասկոսից դէպի հարաւ։ Թիւրքաց զինուորները վերցրել են շատ կարեւոր սահմանագլխային նշաններ։ Շարունակվում են Թիւրքական զօրքերի շատ լուրջ տեղափոխութիւններ։ Ասում են, որ տեղական ժողովրդի նշանաւոր մասը աջակցութիւն է ցոյց տալիս Թիւրքիային։ Երկիւղ կայ նոյն իսկ Սուէզի ջրանցքի ապահովութեան մասին։

Երէկ, ապրիլի 13-ին, ծովային շրջաններում խօսում էին ծովային մեծ ցոյցի հաւանականութեան մասին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 ապրիլի։ Պաշտօնական։ Ապրիլի 16-ին մինիստրների խորհուրդը քննութեան առաւ իսկական քաղաքացիական խորհրդական Նիկօլաեւի նախագահութեամբ կազմված առանձին խորհրդի մշակած այն նախագիծը, որ վերաբերում է գիւղացիների վերաբերեալ օրէնսդրութիւնները փոփոխելու հիմնական որոշումներին. քննեց նաև ֆինանսների մինիստրի գրութիւնները՝ որով մինիստրն առաջարկում է քննել մօտիկ ապագայում մաքսային հաստատութիւններ հիմնելու և երկաթուղային ընդհանուր—ինչպէս և երկաթուղային հացի սակագները փոխելու հարցերը։ Բացի վերոյիշեալներից խորհուրդը քննութեան ենթարկեց կայսերական պալատի մինիստրութեան առաջարկութիւնը—գաղթականներին Ալտայեան վիճակում տեղաւորելու մասին, և Թոյլատրել շարունակել գործունէութիւնը Բարձրագոյն հաստատված այն խորհրդակցութեան, որ պէտք է զբաղվէ կառավարչական սենատի՝ ներկայումս գործադրվող՝ որոշումների վերաքննութեամբ։ Խորհուրդը քննեց նաև Պետական Խորհրդի գումարման ժամանակի հարցը և այդ առիթով կազմվեց մի ուկազ, որը այժմ և եթ ներկայացվելու է ի հաճութիւն և ստորագրութիւն Թագաւոր կայսրի։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 19 ապրիլի։ Սեվաստոպոլի զինուորական ծովային դատարանը քննեց լէյտենանտ Վախտինի և միչման Վինէրի գործը, որոնք մեղադրվում են նոյեմբերին նաւատորմղի վրա պատահած ապստամբութեան ժամանակ ցոյց տուած անգործունէութեամբ։ Նրանք թոյլ են տուել լէյտենանտ Շմիդտին «Պանտելէյմօն» զրահանաւը անցնել։ Դատաւանը դատապարտեց Վախտինին 10, իսկ Վինէրին 8 ամսով բանտարկութեան։

ԲԷԼՕՍՏՕԿ, 19 ապրիլի։ Այսօր ամենուրեք աշխատում են։

ՏՈՒԼԱ, 19 ապրիլի։ Այստեղ կազմվում է առևտրա-արդիւնաբերական և գործարանային ծառայողների պրօֆէսիօնալ դաշնակցութիւն։

ՍԷՏԼԷՑ, 19 ապրիլի։ Փոխադարձ վարկի շինութեան մօտ, որտեղ ապրիլի 20-ին Պետական Դումայի ընտրութիւններն են կատարվելու, ռումբ է նետված։ Ռմբաձիգներից 2-ը հրէաներ են, որոնք ստրաժնիկների հետ հրացանաձգութիւնից յետոյ, բռնվել են։

ԲԵՐԼԻՆ, 19 ապրիլի։ Բեռլինում, Համբուրգում, Բրէսլաւլում և Հաննօվէրում գործաթողները մայիսի 1-ի տօնախմբութեան մասնակցող բազմաթիւ բանուորների արգելել են աշխատել։ Ինչպէս ասում են, միայն Բեռլինում անգործների թիւը հասնում է 100,000-ի։ Ռուսահպատակներին արտաքսելու առիթով ներկայացած հրէայ պատգամաւորութեան՝ արտաքին գործերի մինիստրը ասել է, որ նկատի ունեն ստիպողաբար երկրից ուղարկել 5500 հրէաների, որով առաջին հերթում կուղարկվեն տնանկ և քաղաքական կասկածաւոր անձինք, որոնց թիւը 700-ի է հասնում։

21 ապրիլի

ՎԻԵՆՆԱ, 19 ապրիլի։ Ապրիլի 20-ին հրատարակվելու է մի ուկազ, պրինց Կօնրադ Գօգէնլօէի մինիստր նախագահ նշանակվելու մասին, պրինցը միաժամանակ վարելու է ներքին գործերի մինիստրի պաշտօնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 ապրիլի։ «Торг. Пром. Газ.» լրագիրը հաղորդում է, որ մօտիկ ապագայում ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը Պետական Դումա է մտցնելու իր կազմած ընդհանուր ուսման նախագիծը։ Իսկ բարձրագոյն և միջին կրթական հաստատութիւնների բարենորոգումների նախագծերը մտցնվելու են աշնանանստաշրջանին։ Կայացաւ Պետերբուրգ ժողովված Դումայի գիւղացի անդամների երկրորդ խորհրդակցութիւնը, որի ժամանակ նրանք իրանց տեղական կարիքների մասին մտքերի փոխանակութիւններ ունեցան. ապա ցանկութիւն յայտնեցին ծանօթանալ բոլոր կուսակցութիւնների ծրագիրների հետ։ Այդ խորհրդակցութեան մասնակցելու եկել են Դումայի գիւղացի անդամները։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ, 20 ապրիլի։ Կոնոնց զգեստների 7 արհեստանոցների ծառայողները գործադուլ արին։

ՎԻԵՆՆԱ, 20 ապրիլի։ Հրատարակված են կայսերական հրովարտակները—ուղղած Գաուչին և ներքին գործերի մինիստր Բիլանդրէյտին։ Առաջին հրովարտակում յիշված է, որ Գաուչը շատ յաճախ դժուարին հանգամանքներում էլ հետևել է անձնուրաց հայրենասիրութեամբ կայսրի ցանկութիւններին։ Մատնացոյց է արած Գաուչի—րէյխսրատի աշխատանքները կենդանի դարձնելու և առհասարակ նրա վերակազմութեան համար մեծ ծառայութիւնների վրա։ Կայսրը սրտանց շնորհակալութիւն է յայտնում և անհրաժեշտ է համարում նորից նրան ծառայութեան վերակոչել։ Իսկ Բիլանդրէյտին տուած հրովարտակի մէջ շնորհակալութիւն է յայտնում և հրաւէր է դնում նրան մինիստրական նախկին պաշտօնին հրաւիրել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 ապրիլի։ Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը որպէս Դումայի նախագահ մատնացոյց է արել Մուրօմցովին, իսկ օգնականներ—Նաբօկովին և իշխան Պետր Դօլգօրուկովին։ Իբրև քարտուղարներ—Կօկօշկինին, իշխ. Շախօվսկօյին։ Կուսակցութեան կենտրօնական կոմիտէտը համակայսերական համագումարի միջոցով-կուսակցութեան անունից Պետական Դումային է առաջադրելու մի քանի նախագծեր—վերաբերվող դաշնակցութիւնների և ժողովների ազատութեան, զէմստվային պետերի ինստիտուտը վերացնելու և մամուլի ամնիստիայի։

ՌԻԳԱ, 20 ապրիլի։ Այսօր աւելի քան 18,000 բանուորներ չեն աշխատում. 33 գործարաններ դադարեցրել են աշխատանքները։ Փողոցներում շրջում են զինուորական պահակներ։

ՎԻԵՆՆԱ, 20 ապրիլի։ Կայսրն ընդունեց Գաուչին, շնորհեց նրան իր պատկերը թանկագին շրջանակով և սեփական ստորագրութեամբ։

Կ. ՊՕԼԻՍ, 20 ապրիլի։ Ուսկուբ եկած դատարանը մահվան է դատապարտել Զէյտայի առաջնորդ Մարտինօվին, որը բռնելու ժամանակ ռումբ է նետել աւստրիական ժանդարմական գնդապետի վրա։

ՄՕՍԿՎԱ, 20 ապրիլի։ Քաղաքագլուխը նախազգուշացրել համալսարանի ռեկտորին առաջարկելով որ համալսարանը գիտութեան տաճար ընդունելով, նա թոյլ չի տալ, որ նրա պատերի մէջ քաղաքական որ և է միտինգ կայանայ։

ԲԵՐԼԻՆ, 20 ապրիլի։ Րէյխստագում, խընդրված հասարակութեան ներկայութեամբ սոցիալ-դեմօկրատները — ռուսահպատակներին աքսորելու առիթով կանցլերին հարցապնդում արին։ Վերջինիս կողմից կոմս Պոսադովսկին պատասխանեց, որ օտարազգի ոստիկանութեան գործողութիւնների հսկիչը ենթարկված է ոչ թէ Կայսերական կառավարութեան, այլ գերմանական կայսրութիւնը կազմող առանձին պետութիւններին, և որ Ռուսաստանի հետ կապած առևտրի դաշինքի վրա յենվելը ոչ մի նշանակութիւն չէ կարող ունենալ։ Այդ իսկ պատճառներով կայսերական կանցլերը հրաժարվում է այդ հարցի քննութեան մէջ մտնել, դեռ մի կողմը թողնելով այն հանգամանքը, որ առանձին մասնակի դէպքերի հետազօտութեամբ կայսերական կառավարչական իշխանութիւններն անկարող են զբաղվել։ Զինգէրի առաջարկութեամբ այդ յայտարարութիւնը պաշտպաններ էլ գտաւ յանձին լէհերի և ազատ մտածող հակա-սեմիտների։ Ապա րէյխստագը լսելով Բեբելի ճառը՝ անցաւ հարցի քննութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուխա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Դ. ԱԻՆՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ԿԶԷԼԻՆԻ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱԳՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՈՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ [illegible] և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Հ Ր Ա Ւ Է Ր

Խնդրում եմ 23 ապրիլի ամսոյս, կիրակի, ժամի 12-ին, զկնի ս. պատարագի, շնորհ բերել Զրկինեանց ս. Կարապետ եկեղեցի՝ ծխականներին վերջին ժողովին մասնակցելու, ուր, համաձայն սրբ. առաջնորդի հրամանի, ընտրելու են՝

1) Երկու պատգամաւոր՝ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձուաց ընտրութեանն մասնակցելու։

2) Հոգաբարձուներ՝ Զրկինեան ս. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցի համար։

Ժողովին կարող են մասնակցել ընտանիքի ամեն մի արական անդամ, եթէ տարիքը 25-ից պակաս չէ։

Ծխատէր՝ Գրիգորիս քահ. Երզնկեանց
(շ.) 1—1

Հ Ր Ա Ւ Է Ր

Թեմիս Սրբազան Առաջնորդի կարգադրութեան համաձայն, ապրիլի 26-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 12-ին ս. պատարագից յետոյ Ս. Նշան եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, երկրորդ և վերջին անգամ բոլորն էլ հրաւիրվում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնցից առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու։

Ծխական Ս. Նշան եկեղեցու
Գրիգոր քահանայ Շերմազանեան
(շ. կ.) 1—2

Հ Ր Ա Ւ Է Ր

Մուղնու ս. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը յայտնելով, որ այս ամսի, ապրիլի 23-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է ծխական երկրորդ և վերջնական ընդհանուր ժողով, խնդրում է ներկայ լինել, քննելու և որոշելու հետևեալ հարցերը.

1. Զեկուցումն գործերի դրութեան մասին։
2. Նախահաշիւ դպրոցի և եկեղեցու 1906 թ. և հաշիւ եկեղեցու 1904/5 թ։
3. Ծխական տուրքի սահմանումն։
4. Գայեանեան դպրոցի շինութեան հարցը։
5. Ներս. հոգ. ընտր. 2 պատգամաւորի ընտրութիւնը։
6. Երեցփոխի զեկ. Յովնանեան դպր. հոգ. ընտր. մասին։

Նախագահ հոգաբարձութեան՝ Հ. Առաքելեան
Անդամ-երեցփոխ՝ Ա. Արասխանեան
Անդամ-քարտուղար՝ Լ. Բալանթարեան
(շ. կ.) 1—2

Հ Ր Ա Ւ Է Ր

Որովհետև ամսիս 16-ին Տափի-Թաղի եկեղեցու ծխական ժողովը չը կայացաւ, ծխականների բաւարար թիւը չը լինելու պատճառով, ուստի յիշեալ եկեղեցու յարգելի ծխականները ամսիս 23-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, հրաւիրվում են երկրորդ և վերջին անգամ ժողով ս. Նշանի ուսումնարանը, ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձական ընտրութեան մասնակցելու։

Տափի-Թաղի ս. Գէորգ եկեղեցու
Յովհաննէս աւագ. ք. Մարտիրոսեան
(շ. կ.) 1—2

Հ Ր Ա Ւ Է Ր

Համաձայն Թեմիս Սրբազան Առաջնորդի կարգադրութեան՝ սոյն ապրիլ ամսի 23-ին, կիրակի օրը, առաւօտեան 11 ժամին Կաթուղիկէ ս. Աստուածածին (ս. Գէորգ) եկեղեցւոյ ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդ. համաձայն, հրաւիրվում են երկրորդ ժողով նոյն եկեղեցի, ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու։

Կաթուղիկէ եկեղեցւոյ աւագ երէց՝
Տէր-Ստեփան Սամուէլեանց
(ու. շ.) 2—2

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ամառային գնացքների երթեւեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 1է ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը. . .	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը. . .	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը.	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Հ Ր Ա Ւ Է Ր

Կիրակի մարտի 23-ին առաւօտեան ս. պատարագից յետոյ ժամի 12-ին Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում լինելու է երկրորդ ժողով Ներսիսեան հայոց ազգային հոգևոր դպրոցի նոր հոգաբարձուների երկու պատգամաւոր և երկու կանդիդատ ընտրելու համար, խնդրում եմ յիշեալ եկեղեցու Մեծ. ծխականներին շնորհ բերել նշանակեալ օրը եկեղեցի մասնակցելու յիշեալ ընտրութեանը։

1—2 Սարգիս քահ. Շիօյեանց

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Համաձայն Թեմիս սրբազան Առաջնորդի կարգադրութեան ապրիլ ամսի 23-ին առաւօտեան 12 ժամին, Ջուղուրէթի սուրբ Աստուածածին եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրվում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու։

Թիֆլիս քաղաքի Ջուղուրէթ եկեղեցու ծխատէր՝ Յովհաննէս քահանայ Իւզբաշեանց
(շ.) 1—1

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Սրանով յայտնում եմ, որ այս երկրորդ անգամն է ժողովի են հրաւիրւում, համաձայն Թեմիս Սրբազան Առաջնորդի կարգադրութեան, ամսիս 23-ին առաւօտեան ժամի 11-ին Շամքորեցոց ս. Աստուածածնայ եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն բոլորն էլ հրաւիրվում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջիններն պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու խորհրդին մասնակցելու։

Համազասպ աւագ ք. Տէր-Յովհաննիսեանց
(շ.) 1—1

ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ
Թիֆլիսի ամառային ժողովարանում
ՅՕԳՈՒՏ
Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան լինելու է
Զ Բ Օ Ս Ա Ն Ք
Բարեգործական վաճառք և վիճակախաղ-Ալեգրի նոր զուարճութիւն ֆօնիկուլէր ընծաներով մանկական խաղեր
Վիճակախաղ-Ալեգրիի մէջ գտնվում են թանկագին իրեր
տոմսի գինը 20 կոպ.
Զինուորական նուագ և Ստրունի օրկեստր
Բուֆէտ, կոնֆէտի և ծաղիկների վաճառք
Սկիզբն է ժամը 3-ին
Մուտքը արժէ 30 կ., երեխաները 20 կ.։
Եթէ անձրևային եղանակ լինի, զբօսանքը կը յետաձգվի։ (շ. կ.) 1—2

Հ Ր Ա Ւ Է Ր

Թիֆլիսի բարձր Սրբազան Առաջնորդի առաջադրութեան համաձայն, կիրակի ամսի 23-ին ս. պատարագից յետոյ, ժամի 12-ին կայանալու է ծխական ժողով Թիֆլիսի ս. Աւետեաց Ջգրաշէն եկեղեցում. ընտրելու մի ներկայացուցիչ Թիֆլիսի նահանգապետի կազմած հայ-թուրքական խաղաղարար մասնաժողով. մասնաժողովին մասնակցելու, ուստի պ. պ. ծխականներին հրաւիրվում են եկեղեցին Որոշեալ ժամին մասնակցելու ընտրութեանը։

1—2 Գէորգ աւագ քահ. Աբուլեան

Հ Ր Ա Ւ Է Ր

Թեմիս բարձր սրբազան առաջնորդի կարգադրութեամբ, առաջակայ կիրակի, ամսիս 23-ին, առաւօտեան 10 ժամին Ս. պատարագից յետոյ, կայանալու է երկու պատգամաւորների ընտրութիւն, որոնք իրանց միջից ընտրելու են 12 հոգաբարձու Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի համար։ Ուստի խնդրեմ շնորհ բերել որոշած ժամին ներկայ գտնվելու 2-րդ և վերջին ընտրութեան իբրև ծխական։

Ս. Սարգիս եկեղ.՝ Կոստ. ք. Արարատեանց
(հ. շ. կ.) 2—3

,,Գուտտենբերգ“

Քանդած օջախ, Սունդուկեանի, կատակ. 3 արար.	»	50
Հոգի Հայաստանի, գունաւոր, յարմարեցրված և կանվայի վրա գործելու, արտասահմանի տիպ. .	5	»
Հայրապետութիւն հայոց, գունաւոր .	»	50
Բառգիրք, հայերէն լեզուի. .	4	60
Ռուսերէն հայերէն բառարան Դաղբաշեանի (9 հատոր, լոյս է տեսել 8 հատոր)	8	»
Ռ. Պատկանեանի մեծադիր լուսանկ.	1	
Պատկերներ, հատոր ա., Ջաւախեցու.	»	60
Փուչ ղաւակ, դրամա 5 գործ, Գ. Ղարաջեանի . . .	»	50
Մահտեսի Սարգիս (գիւղական կեանքից վէպիկ) Գ. Զուբարի .	»	50
Ջալալեդդին, Րաֆֆիի, հեղինակի պատկերով . . .	»	6
Խենթը և Ջալալեդդին (մի գրքով) Րաֆֆի, ...	2	»
Խաչագողի յիշատակարանը, Րաֆֆիի .	2	»
Կայծեր, Րաֆֆիի երկու հատոր .	5	»
Դաւիթ-բէգ, Րաֆֆի . . .	3	50
Սամուէլ, Րաֆֆիի . . .	3	50

Դիմել՝ Тифлисъ книжный магазинъ «Гутенбергъ» Г. И. Галустяну. № 4. 1—2

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի Պասկեվիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 73—100

Կայքերը կրակից ապահովագրող Թիֆլիսի փոխադարձ ընկերութեան
Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը
յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ.պ. անդամների, որ կիրակի ապրիլի 23-ին, ցերեկվայ ժամը 11-ին քաղաքային դումայի դահլիճում տեղի կունենայ
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ
Ապրիլի 9-ին չը կայացած ժողովի փոխարէն միևնոյն ծրագրով

Սրանով վարչութիւնը պատիւ ունի յայտնելու պ.պ. անդամներին, որ, ընկերութեան կանոնադրութեան § 27-ի հիման վրա այս ժողովը ամենայն դէպս կանոնաւոր կը համարվի, ի նկատի չառնելով ներկայ եղողների թիւը։ (22) 2—2

,,РОССІЯ“ Ապահովագրական Ընկերութիւնը կատարում է ապահովագրութիւններ դրամագլուխների, մահվան դէպքերի, ծերութեան, կենդանութեան ժամանակ եկամուտների, այրիների թօշակների, աղջիկների օժիտների, երեխաների թօշակների վերաբերեալ։
1905 թ. ապահովագրված էին 81863 մարդ, միջին թւով խրաքանչիւրը՝ 2080 ռուբ.։
Մանրամասնութիւնների համար դիմել վարչութեան (С.-Петербургъ Морская, № 37) և Կայսրութեան բոլոր քաղաքների գործակալներին։
Թիֆլիսում՝ Сергіевская ул. № 4. 4—4

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԻ
ՊԱՀԵՍՏՈՒՄ,
Մուշտայիդ այգում, վաճառվում է ՇԵՐԱՄԻ ԸՆՏԻՐ ՍԵՐՄ դեղին և սպիտակ տեսակի, մախալը 40 կոպ.
Թթենիներ, այգեպահական և շերամապահական գործիքներ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐ,
Մեղուապահական գործիքներ,
ԴԱԴԱՆ-ԲԼԱՏՏԻ ԵՒ ԳԷԴՕՆԻ ՓԵԹԱԿՆԵՐ, ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԸ 4 ՌՈՒԲԼՈՒՑ
ՍԿՍԱԾ։ Մեծ քանակութեամբ գնողներին զիջումն է լինում։
Արհեստական մոմաթերթ, (вощина) գործիքներ, ցենտրափուգներ, նկարներ, քարտէզներ, ձեռնարկներ և այլն։
(ե. հ. շ.) Գների ցուցակը ուղարկվում է ՁՐԻ։ 15—25

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадат. ул. № 15